

№ 4 ՍԳՈՐԻԼ 1885

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

I. Զատիկ. (բերուս) . . . . . Նկար. Գ. Բաշինջաղեանց.
II. Ուսուցմնարանները վարման մասին . . . .
III. Վարագ (Խրիմեան Հայրիկի կեանքից) . . . Բաֆֆի.
IV. Մանուկն օրօրոցում (նման. Շիլլերի) . . . . Ա. Ծատուրեանց.
V. Աշակերտուհի . . . . . Ե. Վարաքեօվա.
VI. Մանկական ֆելիէտօն . . . . . Կ. Մ. Շահնազարեան.

ԳԻՏՈՒԹԻՒՆ

VII. Օդը և նրա յատկութիւնները . . . . . Յ. Զոհրաբեան.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարդու գլխի մազերի թիւը. Փորձեր մինչատների կենսականութեան վրայ. Այրուող ձիւն. Ձուն թարմ պահելու միջոց.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկները (5 հատ). Խնդիր. Շուտասելուկ.

«Ղեբիւրի» խմբագրատունը ձախլում է առաջին (1883) և երկրորդ (1884) տարուայ «Ղեբիւրը» շքեղ կազմով:

Առաջին տարուանի գինն է 5 ռուբլի:
Երկրորդինը » » 4 ռուբլի:
Իսկ անկազմ՝ իւրաքանչիւր տարուանը մէկ ռուբլիով պակաս:
Փոստի ծախսը խմբագրութեան վրայ է:

☛ «Ղեբիւրի» 1883 թ. №№ 1, 2 և 3 խմբագրութիւնն ինքն ուրախութիւնով կրգնէ իւրաքանչիւր №-ը **30** կոպէկով:

Խմբագրատունը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 11-ից մինչև 1-ը:

Հասցէն՝ Վանքի մեծ փողոց, տուն № 7:

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 4

ԱՊՐԻԼ

ԹԻՖԼԻՍ
ՑՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆՑ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1885

ՉԱՏԻԿ

Առաջ. Ա. Սարգարեանց, նկարեց նկարիչ Գ. Բաշինջաղեանց, փորագրեց «Աղբիւրի» փորագրիչ Գ. Տատիշվիլի (Փիգարօ)։

Առաջնակարգ Ազգային 19-րդ ս. Ընծայման դասում յիշատակուած է ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը։

Յարգանքով հանձնարարում ենք մեր ընթերցողների ուշադրութեանը նեղկայ համարում տպուած «Վարագ» յօդուածի վրայ։

Փետրուարի 22-ից Կառավարութեան հրամանով սկսեցին փակուել նոր կանոններին չհնազանդուող Հայոց եկեղեցական ուսումնարանները։

Կ. Պոլսում Հայոց Ազգային ժողովը կաթողիկոսարանը ընտրել է Հայների մեծամասնութեամբ՝ ս. ս. Խրիմեան Հայրիկին, Մելքիսեդէկ Մուրատեանին և Խորէն Աշըգեանին։

Կաթողիկոսի ընտրութեան պատգամաւոր ընտրուել են Վրաստանի և Իմերէթի թեմից ս. Ա. Յովհաննիսեան, Ղարաբաղի՝ ս. Աթաբէգեան, Շամախու՝ ս. Վարշամեան, Ղարսի՝ ս. Ղազարեանց, Բեսարաբիայի՝ ս. Աւետեան։

ՎԱՐԱԳ

Մի գլուխ «Կայծերի» II-րդ հատորից։

(Դեռ լոյս չտեսած)

Ես մնում էր տեսնել Վարագայ վանքը, այնուհետև մեր հետազոտութիւնները Վանայ շրջակայքում պէտք էր վերջացած համարել։ Գեղեցիկ, պայծառ առաւօտ էր, երբ ես և Ասլանը ձի նստած, դուրս եկանք Այգեստանի *) ծառազարդ փողոցներից և ուղևորվեցանք դէպի վանքը։ Մեր ստջևն էր Վարագայ սարը իր ոքանչելի տեսարաններով։ Արևը դեռ նոր էր սկսել ծագել։ Նա կամաց-կամաց վեր էր համբառնում Վարագայ լեռնագագաթի ճիշտ այն ամենաբարձր կէտից, որ կոչվում է Գալիլիայ։ Ես առաջին անգամ էի տեսնում արևի մի այնպիսի հրաշալի ծագումը։ Ինձ այնպէս էր թւում, որ տունջեան լուսատուն գլուխը հանդչել էր Գալիլիայի գագաթի վրա, մինչդոյն նաւիրական

*) Այգեստան — հայաբնակ արուարձան Վանի քաղաքի մօտ։

այրերի մէջ, որտեղ մի ժամանակ պատսպարված էր Հռիփսիմէն իր ընկերուհիների հետ, իսկ այժմ լուսաճաճանչ պայծառութեամբ դուրս էր գալիս իր Հանգստարանից լուսաւորելու Հայոց աշխարհը: Նոյն այրերի մէջ ճգնում էր Երանելի կոյսը, նոյն այրերից դուրս եկաւ և նա, և որպէս մի պայծառ լոյս, ուղևորվեցաւ դէպի Արարատ, կատարելու այն մեծ բարոյական պատերազմը Հայոց Հեթանոս Թագաւորի և Հեթանոսական խաւարի հետ, որի արդիւնքը եղաւ քրիստոնէութեան մուտքը Հայաստանում: Նոյն այրերի մէջ Թագցրեց նա կենսատու վայրի ս. նշանը, որ ամփոփված էր մի փոքրիկ խաչի մէջ և որը նրա կուրծքի ու պարանոցի աստուածային զարդն էր կազմում: Ամբողջ չորս դար Հրաշալի ս. նշանը մնաց այնտեղ անյայտութեան մէջ, մինչև Թօդիկ ճգնաւորի մշտական ազօթքով յայտնվեցաւ նա, և արեգակի լուսափայլ պայծառութեամբ, Վարագայ լեռնադագաթի բարձրութինից թռչելով, իջաւ նրա լանջացը վրա, և որպէս մի ժամանակ զարդարում էր Հռիփսիմէի կուրծքը, այնուհետև զարձաւ Վարագայ լեռան կուրծքի երկնային զարդը: Միևնոյն տեղում հիմնվեցան տաճարներ, որ ս. նշանի անունով կոչվեցան ս. Խաչ, — այդ տաճարներն էին, որ բոլորը միասին ներկայացնում էին Վարագայ վանքը, ուր այն առաւօտ ես և Ասլանը դնում էինք:

Արևը բարձրացաւ: Նրա ճառագայթները հրեղէն շառաւիղների նման տարածվեցան Վանայ շրջակայքը, տարածվեցան ծովակի մանիշակագոյն մակերևոյթի վրա և լուսաւորեցին առաւօտեան մռայլի մէջ ծածկված հեռաւոր լեռները: Ինձ տիրում էր խորին հոգեմայլութիւն: Արևի ծագումը զարթեցնում էր իմ սրտում այդ նուիրական վայրերի և այդ սրբազան լեռների վաղեմի յիշատակները: Կարծես, դարերը յետ-յետ էին դնում և հին աւանդութիւնը կենդանանում էր, կերպարանք էր ստանում իմ աչքի առջև:

Կարծես, կրկին երևում էր ինձ Թօղիկ ճգնաւորի սքանչելի տեսիլքը։—Կենսատու ս. նշանը թռչելով ցած է իջնում Վարագայ լեռնագագաթի բարձրութիւնից, և նրանից ցոլանում են տասներկու լուսեղէն սիւներ, որոնք հանգչում են տասներկու տեղերի վրա։ Հրեղէն սիւները այնքան ժամանակ մնում են այնպէս կանգնած, մինչև երկրի իշխաններն ու ժողովուրդը տեսնում է նրանց։ Յետոյ բարեպաշտ ժողովուրդը, միացած իր իշխանների հետ, կառուցանում են տասներկու տաճարներ միևնոյն տեղերի վրա, ուր իջել էին լուսեղէն սիւները։ Նրանցից երկուսը իջել էին այն տեղերում, ուր շինվեցան ս. Գրիգոր և Կարմրաւոր վանքերը։ Երեքը իջել էին Վերին Վարագում, որ և կոչվում է Գալիլիայ։ Իսկ եօթը Ներքին Վարագում։ Այդ եօթը տաճարներից բաղկացած եկեղեցիների խումբը,— որոնց իւրաքանչիւրը առանձին-առանձին անուններ ունեն, — բոլորը միասին սարի անունով կոչվում են Վարագայ վանք։

Այն օրից, որ յայտնվեցաւ ս. նշանը, Հայոց եկեղեցին նրա համար տօն սահմանեց, որ կատարվում է մինչև մեր օրերը։ Այն օրից, որ յայտնվեցաւ ս. նշանը, Վարդգը դարձաւ Հայոց լեռների սուրբ Սիօնը. նրա գագաթը, նրա կուրծքը, նրա ստորոտները ծածկվեցան վանքերով, և կրօնաւորների բազմութիւնը լցրեց այդ վանքերը։ Երկար տարիներ յիշեալ ս. նշանը պահվում էր Վարագայ վանքում, և ամեն կողմից ուխտաւորների բազմութիւնը դիմում էր այնտեղ երկրպագութեան համար։ Երկրի թէ հարուստը, թէ աղքատը թափում էր այնտեղ իր արծաթն ու ոսկին, նուիրում էր իր կայքն ու կալուածները ս. նշանի սպասաւորներին, որպէս զի Վասպուրականի այդ հռչակաւոր սրբավայրը միշտ շէն ու պայծառ մնայ։ Աբեղաները այնտեղ վայելում էին ժողովրդի բարեպաշտութեան պտուղները և աղօթում էին աշխարհի համար։

Գագիկ Արծրունին ծախսեց իր գանձից ահագին գու-

մար և շինել տուեց յիշեալ ս. նշանի համար մի ոսկեայ տուփ և պահարան: Իսկ Աշոտ արքայորդին ծախսեց երեսուն հազար ոսկի և զարդարեց նրա պահարանը մարգարիտներով ու թանգագին քարերով: Երբ Արծրունիների վերջին թագաւոր Սենեքերիմը իր ամբողջ պետութիւնը տալով յունաց կայսրին, ինքը տեղափոխվեցաւ Սեբաստիայ, նա իր թագաւորութիւնից յօժարվեցաւ զրկվել, բայց ս. նշանը տարաւ իր հետ: Իսկ յետոյ դժբախտ թագաւորի մարմնի հետ կրկին փոխադրվեցաւ Վարագ: Այնուհետև այդ թանգագին սրբութիւնը դարձաւ զանազան բռնակալների ագահութեան առարկայ: 1651 թուին Խօշաբ բերդին տիրող քուրդ Սուլէյման բէկը՝ Զօմար կոչված աւազակապետի առաջնորդութեամբ եկաւ, կողոպտեց Վարագայ վանքի հարստութիւնները և ս. նշանը դերի տարաւ իր բերդը: Բարեպաշտ ժողովրդի առատաձեռնութեան դարևոր արդիւնքները մի քանի օրուայ մէջ ոչնչացան: Չորս տարի ս. նշանը մնաց գերութեան մէջ: Իսկ Վանայ հասարակութիւնը այդ չորս տարուայ ընթացքում սուգ էր կատարում: Քանիցս անգամ պատգամաւորներ ուղարկվեցան և մեծ փրկանքներ առաջարկվեցան, մինչև, վերջապէս, կարողացան գերութիւնից ազատել նրանց աշխարհի սրբութիւնը:

Մենք այժմ բարձրանում էինք Վարագայ լեռան գագաթը: Մինչև մի որոշ դիծ՝ այդ սարը կանաչազարդ է. տեղ-տեղ երևում են թուփեր ու պրակներ, տեղ-տեղ պատած է խոտաւէտ մարգերով, շատ տեղերում էս լեռան կողքերը ծածկված են հաստունացած գարնի կամ ցորեանի ոսկեզոյն արտերով: Հնձաւորը գործում է, մանգաղը փայլում է, և աշխատասէր մշակի թախծալի երգը հնչեցնում է հսկայ լեռան սրբազան վայրերը: Արևը սկսել է այրել, չը նայելով, որ դեռ առաւօտ է: Հովիւը իր թաղիքեայ վերարկուն (քափանակ) ձգելով ցուպի գլխին, նրան ամպ-

Հովանիի ձև է տուել և, արևի կիզող ճառագայթներից պատսպարվելու համար, նստել է նրա ստուերի տակ։ Նրա շուրջը, սիրուած խոտաւէտ արօտամարգերի մէջ, արածում են ոչխարները, մի ժայռից դէպի միւսը թռչկոտում են այծերը, իսկ աչալուրջ շները հեռուից հսկում են այդ միամիտ անասունների անհոգ զուարճութիւնների վրա, որ կարող է մի ակնթարթում սուգի փոխվել...

Կանաչազարդ գծից դէպի վեր, մինչև գագաթը, վարագայ լեռը մերկ է և բաղկացած է անմատչելի, թխագոյն-կարմիր ժայռերից։ Այդ բարձրութիւնների վրա խիստ հազիւ անգամ դիպել է մարդու ոտքը։ Երբեմն սրաթռիչ կաքաւները միայն խմբովին թռչում են մի ապառաժից դէպի միւսը, կամ սևաւիետուր արծիւը, որպէս մի սգաւոր և սևազգեստ ոգի, միայնակ նստած Գալիլիայի ժայռերից մէկի վրա, վերևից սիրուելեամբ նայում է դէպի ցած,— դէպի Արծրունիների աւերակ պալատների բեկորները, այն Արծրունիների, որոնք այնքան շատ դարեր խնամել ու փայփայել էին նրան *)։

Վարագայ լեռը Վանայ հովտի շրեմարանն է. այստեղից են վազում ջրերի այն բազմաթիւ վտակները, որոնք ոռոգում են Այգեստանի ընդարձակ այգինները և ջուր են մատակարարում շատ գիւղերի, որոնք սիրուած են լեռան ստորոտներում։

Վանքին դեռ ոչ բոլորովին մօտեցած, ճանապարհի մի կողմում տեսանք մի խումբ մարդիկ։ Այստեղ, որպէս երևում էր, երկրագործական մի նոր փորձ էին անում, վարում էին մի դաշտան, որը թէ իր ձևով և թէ տեսակով ամենևին նման չէր տեղական ծանր, անշարժ դու-

---

*) Ս. Գշակունեաց Թագաւորների տիրապետութեան ժամանակ Արծրունի նախարարների պաշտօնն էր արծիւները կրել Թագաւորի տապատմ

Թաննելին։ Գուլթանի մահը բռնած, կառավարում էր մի բարձրահասակ անձնաւորուլթիւն, որի հադուստից երևում էր, որ աշխարհական չէ։ Նա ցոյց էր տալիս վանքի անփորձ մահկալներին նորաձև դուլթանի բանեցնելու եղանակը։ Մլուսները հետաքրքրուլթեամբ նայում էին։ Մենք, երկրի սովորուլթեան համեմատ, «բարի աջողումն» ասելով, անցանք։ Տեսնելով, որ մենք դէպի վանքն ենք գնում, նրանցից մէկը խումբից բաժանվեցաւ, եկաւ մեզ հետ։ Դա մի երիտասարդ աբեղայ էր, որ առաջարկեց առաջնորդել մեզ մինչև վանքը։ Երբ բաւական մօտեցանք վանքին, Ասլանը հարցրեց նրանից.

—Մենք կարող ենք գտնել Հայրիկին վանքում։

Այդ անունով կոչում էին վանահօրը։

—Դուք չը ճանաչեցիք նրան,— զարմանալով հարցրեց աբեղան.—Հայրիկը հէնց նա էր, որ վարում էր դուլթանը։

—Այդ ինչ գուլթան էր։

—Հայրիկը նոր է բերել տուել Եւրոպայից. այսօր առաջին փորձն էին անում։ Սպասում ենք ուրիշ երկրա-

գործական անօթներ ևս շուտով ստանալ։

— Վանքը երկրագործութեամբ է պարապում։

— Այո, իր կալուածները ինքն է մշակում։ Բայց մենք ունենք վանքում և երկրագործական դպրոց։

— Երկար կը մնայ Հայրիկը այնտեղ։

— Երկար չի մնայ։ Նա տեսաւ, որ դուք վանքն էք գնում, ինձ պատուիրեց, որ ձեզ տանեմ, այնտեղ հանգստացնեմ, մինչև իր վերադարձը։

Երբ հասանք վանքը, երբ շրջապարիսպի գլխաւոր դռնից ներս մտանք, երբ հետզհետէ երևան եղան այլ հինաւուրց սրբավայրի պատկառելի շինուածքները, նրանց արտաքին տեսքը մեզի վրա այն տպաւորութիւնը գործեց, որ ես յաջամալից սկսեցի մտածել, թէ այստեղ անպատճառ տեսնելու եմ Կտուց անապատի հակապատկերը։ Եւ իրաւ, այստեղ շնչում էր մի այլ կեանք, երևում էր մի այլ աշխարհ, այստեղի մթնոլորտը ներշնչուած չէր անապատական մշտավառ խունկի թուլացնող և վհատեցնող ծխով, — այստեղ միացրել էին հոգևորը, երկնայինը աշխարհայինի հետ։

Վանքը թէ արտաքուստ և թէ ներքուստ հովանաւորված էր ծառերով ու պարտէզներով. վազում էին առուն, յստակ աղբիւրները և, ջրերի վտակները հաւաքվելով, մեծ աղմուկով դարձնում էին վանական ջրաղացի ծանր աղօրիքը։

— Այդ ծառերը Հայրիկի տնկածն է, — ասաց մեր առաջնորդը, — այն ջրաղացը երկար ժամանակ խանգարված էր, չէր բանում, Հայրիկը նորոգեց։

Երիտասարդ աբեղան տարաւ մեզ մի բաւական մաքուր և ճաշակով կահաւորած սենեակ, և խոյնն սկսեց մեզ հետ խիստ մտերմական խօսակցութիւն, թէ ո՞րտեղից ենք գալիս, ո՞ւր պիտի գնանք, արդեօք պարոն բժշկապետը (Ասլանը) երկար պիտի մնայ Վանում, ինչ ազգից է պարոն բժշկապետը, քանի՞ լեզու գիտէ և այլն։ Այդ

հարցմունքները այն աստիճան անկեղծ էին, որ Սոլանը առանց ձանձրանալու պատասխանում էր նրան։

—Շատ ժամանակ է, որ Հայրիկը այդ վանքի վանահայրն է, — հարցրեց Սոլանը։

—Շատ ժամանակ չէ,—պատասխանեց աբեղան,—բայց այդ վոքր ժամանակում նա այնքան դրծ կատարեց, որ մի ուրիշը, որքան և մեծ ջանք ու եռանդ ունենար, հազիւ թէ տասն, քսան տարիների ընթացքում կարող կը լինէր կատարել։

Երիտասարդ աբեղան Հայրիկի աշակերտներից էր։ Ես խոլոյն նկատեցի, և այնուհետև ինձ շատ անդամ էր պատահել նկատել, որ նրա աշակերտները նրա մասին խոսելիս, նրանց տիրում էր խորին ոգևորութիւն, և նրանք մի առանձին պարծանքով էին յիշում այն մարդու անունը, որին այնքան սիրում էին, որին այնքան պարտական էին։

—Հայրիկից առաջ, շարունակեց նա, — այդ վանքը համարեա թէ աւերակ էր. ոչ դպրոց կար, ոչ աշակերտ և ոչ կանոնաւոր տնտեսութիւն։ Նրա եկամուտները կազմտվում էին թէ ներքին և թէ արտաքին աւազակներից։ Վանքը պարտքերի ներքոյ խեղդվում էր։ Մինչև անդամ ս. Նշանը գրաւ էր դրված թուրք վաշխառուների մօտ։ Բայց Հայրիկը կեանք տուեց այդ վանքին։ Բոլորը, ինչ որ տեսաք և ինչ որ պիտի տեսնէք, նրա աշխատութեան պտուղն է։ Բայց վոխարէնը, ինչ որ ստացաւ նա և ինչ որ ստանում է,—միշտ եղել է ատելութիւն, հալածանք և դաւադրութիւն իր խաւարասէր թշնամիների կողմից...

Վերջին խօսքերը արտասանելու միջոցին երիտասարդի ձայնը դողաց։ Նա պատմեց մի ցաւալի անցք, որ պատահել էր հէնց նոյն օրերում։ Հայրիկը վարադայ վանքից, որպէս նրա սովորութիւնն էր, միայնակ, ոտքով վան քա-

դնալու ժամանակ, ճանապարհին հանդիպում է նրան մի քուրդ։ Երբ Հայրիկը իր արծուի հայեացքով նայում է նրա երեսին, աւազակը շփոթվում է, նրա ձեռքերը սկսում են դողալ։

—Ինչո՞ւ շփոթվեցար, բարեկամ,—հարցնում է Հայրիկը իր սովորական մեղմ ժպիտով։

—Ուզում էի քեզ սպանել,—պատասխանում է աւազակը և, չոքելով նրա առջև, գրկում է նրա ոտները։

—Ի՞նչու չը սպանեցիր,—հարցնում է Հայրիկը, վեր բարձրացնելով նրան։

—Աստուած իմ ձեռքը բռնեց,—ասում է քուրդը և սկսում է պատմել, թէ ո՛րպէս Հայրիկի թշնամիները կաշառեցին նրան, և ո՛րպէս ինքը խոստացաւ կատարել այդ եղեռնագործութիւնը, բայց խղճի ձայնը ասաց նրան, թէ պէտք չէ սուր բարձրացնել Աստուծոյ օրհնեալի վրան։

—Դու էլ օրհնեալ լինես, որդի,—ասում է նրան Հայրիկը։ Գնա խաղաղութեամբ, բայց այդ բոլորը, ինչ որ պատմեցիր ինձ, ուրիշ ոչ ոքի չի պիտի յայտնես։

—Դու խնայում ես քո թշնամիներին,—հարցնում է աւազակը զարմանալով։

—Աստուած այդպէս է պատուիրում,—պատասխանում է Հայրիկը։

Բայց չը նայելով Հայրիկի պատուէրին, քուրդը ամեն տեղ պատմում է նրա կեանքի դէմ դաւադրութիւն սարքող անձինքների անունները, և այդ լսում է ամբողջ քաղաքը։

—Ո՞վքեր են այդ դաւաճանները,—հարցրեց Ասլանը։

—Մի քանի եկեղեցականներ, միացած մի քանի՝ սղանների հետ, որոնց պարագլուխն է մեր քաղաքի առաջնորդը,—պատասխանեց երիտասարդ աբեղան։

—Ի՞նչ էր առիթ տուել նրանց՝ մինչ այդ աստիճան անիրաւութեան դիմել, թաւիել տալով մի անմեղ արիւն,

— Հարցրեց Ալանը վախը ինչ զայրացած ձայնով։ Մի՞թե դպրոցը, լոյսը, կրթությունը այդքան ատելի է նրանց։

— Ես չեմ կարծում,— ասաց աբեղան,— որ նրանք լուսաւորութեան թշնամի են և այդ պատճառով զինուորվում են նրա տարածողների դէմ։ Նրանք չէին կարող թշնամի լինել լուսաւորութեան, որի մասին ամենևին հասկացողութիւն չունեն, որի վրա երբէք չեն մտածել։ Խնդիրը բոլորովին տնտեսական է։ Մի ժամանակ, որպէս քանի որ ասւում է, այդ վանքում կանոնաւոր տնտեսութիւն չը կար. նրա եկամուտները վատնում էին միաբանները, և ինչ էլ որ մնում էր, առաջնորդի կուսակրօնը անցնում։ Բայց երբ Հայրիկը վանահայր դարձաւ, նախ վանքը մաքրեց անպիտան միաբաններից, նրանց փոխարէն խմբեց այստեղ աւելի արժանաւոր անձինք, և այնուհետև վանական արդիւնքները սեպհականացրեց իր նոր կառուցած հիմնարկութիւնների պահպանութեան համար։ Այդ բոլորից յետոյ, շատ բնական է, որ այն անձինքը, որոնք առաջ վատնում էին վանքի եկամուտները, կը թշնամանային Հայրիկի հետ։

— Բայց մի՞թե Հայրիկը բարեկամներ չունի։

— Ունի, բայց Հայրիկի բարեկամները այնպիսի կարող, այնպիսի հզօր մարդիկ չեն, որպէս նրա թշնամիները։ Հայրիկի բարեկամները ժողովրդի հալածված, հարստահարված և ամեն իրաւունքներից զրկված դասակարգն է։ Հայրիկի բարեկամները աղքատ շինականներն են, քաղաքի արհեստաւորներն են, և անտուն, անտեղ, անհող, անջուր սարակներն ու բանուորներն են,— և մի քանի երիտասարդներ, որոնք ազնիւ սիրտ և բարի ցանկութիւններ ունեն, բայց իրանց ցանկութիւնները կատարելու համար՝ ոչինչ միջոցներ չունեն։

Հայրիկը եկեղեցական աստիճանով դեռ վարդապետ էր, բայց նրա կատարած գործերը, ստացած հռչակը, վա-

յելած ժողովրդական մեծ Համարումը,—այդ բոլորը չէր կարող չը գրգռել միւս եկեղեցականների նախանձը, որոնք թէ աստիճանով և թէ դիրքով աւելի բարձր էին քան թէ նա, թէև երիտասարդ սրեղան նրանց թշնամութիւնը բացատրում էր միայն տնտեսական սպատճառներով: Նրա կառուցած նոր հիմնարկութիւնները՝ իրանց նորութեամբն անդամ՝ կարող էին օտարոտի և վնասակար թուել միւս եկեղեցականներին: Նա հիմնել էր իր վանքում մի դիշերօթիկ դպրոց, որը մի տեսակ վարժապետանոց կարելի էր համարել, ուր հաւաքել էր նա զանազան տեղերից մանուկներ, այն նպատակով, որ վարժապետացուք կամ կրթեալ քահանայացուք պատրաստվեն և, վերադառնալով իրանց հայրենիքը, դիւղական քահանաներ կամ վարժապետներ դառնան: Դպրոցը ունէր և երկրագործական բաժին: Գիւղական վարժապետը կամ դիւղական քահանան, հայրիկի կարծիքով, բնական չէ, որ պէտք է ծանօթացնէին դրել, կարդալ, հաշուել, կամ. կատարէին դիւղացու հոգևոր, եկեղեցական պէտքերը,—այլ միևնոյն ժամանակ նրանք պէտք է ցոյց տային, թէ որպէս պէտք է գիւղացին վարէր իր հողը և որպէս պէտք է պարմանէր իր անասուններր, որ աւելի արդիւնք ստանար: Բացի դպրոցից, հայրիկը դանց չէր տրել իր վանքում հիմնել կրթութեան երկրորդ դործիչը՝ տպագրական մամուլը: Նրա տպարանից լոյս էին տեսնում դանազան դասագրքեր և ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու համար փոքրիկ, դիւրիմասա դրքոյկներ աշխարհիկ լեզուով, այլև մի ամսագիր, որ խմբագրվում էր գլխաւորապէս նրա միաբանութեան աշխատութեամբ: Այդ բոլորի ի կատար ածելը արժել էր այնքան մեծ ջանքերի և այնքան անտանելի տառապանքների, որոնց դէմ միայն հայրիկի նման մարդու երկաթեայ հաստատամտութիւնը կարող էր պատերազմել: Քանի՛, քանի՛ անդամ նա ոտքով Կ. Պոլիս էր դնացել,

Հարուստ ամիրաների դռները բախելու և իր հիմնարկութիւնների համար օժանդակութիւն խնդրելու: Նա միայնակ ստեղծեց այն բոլորը, նա առաջին օրինակը եղաւ, որ դատարկամոլ և ձրիակեր կրօնաւորների անկեալանոց դարձած վանքին տուեց մի այնպիսի կազմակերպութիւն, որ նա սկսեց այնուհետև ծառայել իբրև մի բարձր հիմնարկութիւն ժողովրդի հոգևոր, բարոյական և մտաւոր կրթութեան համար:

Ո՛րքան մեծ անհամբերութեամբ ցանկանում էի տեսնել այդ մարդուն, լսել նրա ձայնը և խօսել նրա հետ: Նա մեզ երկար սպասել չը տուեց, շուտով վերադարձաւ դուքանի մօտից, քրտնած, փոշիների մէջ թաթախուած, նախ վազեց իր սենեակը, երևի, լուացվելու համար, յետոյ եկաւ մեզ մօտ: Նա ուրախ էր, որովհետև նորաձև դուքանի առաջին փորձը յաջողութիւն էր խոստանում:

Նա դեռ երիտասարդ էր, երեսուն և վեց տարեկան հազիւ կը լինէր. այդ հասակի համեմատ «Հայրիկ» մականունը շատ օտարոտի կարող էր լինել, եթէ նա չունենար մի սիրող հօր խնամքը, հոգածութիւնը և բոլոր բարեմասնութիւնները թէ դէպի իր վանքն ու միաբանութիւնը և թէ դէպի ժողովուրդը: Բարձրահասակ էր նա և ամուր կազմուածքով. երևում էր, որ ծոմը, մշտական աղօթքը և խիստ ճգնութիւնները,—որոնք մեր անապատականների բարեպաշտութեան դլխաւոր արդիւնքն են համարվում, չէին մաշել նրա մարմինը: Դլխին վեղար չունէր. շաղանակի դոյն խիտ մազերը կիսով չափ ծածկում էին նրա լայն ճակատը և, դէպի յետ սանրուելով, անվոյթ կերպով թափվում էին հզօր ուսերի վրա: Մօրուքը թաւամազ էր, որպէս անապատական առուծի բաշը: Ինչ որ աւելի նշանաւոր էր նրա հեզ, միևնոյն ժամանակ այրական դէմքի վրա, դրանք էինք՝ արծուի խոշոր աչքերը և արծուի մագլաձև քիթը, որոնք թռչունների այդ վե-

Հափառ արքայի բնաւորութեան յատկանիշներն էին արտայայտում — թէ նրա հեռատեսութիւնը և թէ նուրբ հոտառութիւնը: Գուցէ այդ էր պատճառը, որ նա ստացել էր մի երկրորդ մականուն և «Վասպուրականի արծիւ»: Հազուստը պարզ էր և վայելուչ, իսկ վարվոզութեան ձեւերի մէջ խիստ հաստատակ էր նա և անկեղծ: Նայելով այդ կրօնաւորի վրա, ի նկատի առնելով նրա անցեալը և ներկան, իսկոյն երևում էր՝ մինչև շինականի աղքատ խրճիթը խոնարհված մարդու ամկասիրութիւն, ամկի բոլոր առաքինութիւններով, ամկի բոլոր անփառասիրութեամբ, — և մարդասիրական բարձր գաղափարներով ոգևորված մի եկեղեցականի անձնազոհութիւն, որ իր աշխատութեան հոգևոր մխիթարութիւնը որոնում է նոյն իսկ ամկի, — գաղերով շրջուառացրած ամկի հանգստութեան և բարօրութեան մէջ: Նա ժողովրդի մարդ էր և ժողովրդի համար ծնուած:

Ես առաջի անգամն էի տեսնում մի այսպիսի սիրելի անձնաւորութիւն: Նա այն տեսակ արեղաներից էր, որի բերանում Յիսուսի, Մովսէսի և Պօղոսի անուննների հետ ստէպ յիշվում էին իր ազգի նահապետների անուննները, ոչ միայն հասարակ խօսակցութեան մէջ, այլև սուրբ տաճարի բեմից: Նա չէր խօսում բիբլիական Պաղեստինի և «վերևի Երուսաղէմի» երանութիւնների մասին, նրա ուխտեալ երկիրը Վասպուրականն էր: Հայրենասիրութիւնը նրա մէջ հասնում էր մինչև մոլեռանդութեան, իսկ կրօնասիրութիւնը մինչև բարձր առաքինութեան:

Նրան տեսնելիս, ես մտաբերում էի մեր ջորրորդ կամ հինգերորդ դարերի արեղաներից մէկին, որ, կարծես, նոր էր վերադարձել Աթէնքից, և ցուլը ձեռին, մի Թափառական դէրվիշի նման, շրջում էր Հայրենի երկրի զանազան կողմերը և տարածում էր այն լոյսը ու գիտութիւնը, որ իր հետ բերել էր Սոկրատի ու Արիստո-

տէլի մայրաքաղաքից։ Հայրենիքը չէ ընդունում իր մէջ կրթուլթեան նոր առաքեալին, իսկ խաւարասէր կղերը ատելուլթեամբ կատաղած է նրա դէմ։ Բայց նա արհամարհում է խաւարասէրների հալածանքը և հաստատ անվեհեր կամքով առաջ է տանում սուրբ դործը։ Մի տեղից հալածվում է նա, միւս օրը յայտնվում է մի այլ տեղում և սկսում է ցանել իր հայրենակիցների անապատ դարձած մտաւոր անդաստանում այն բարի սերմերը, որ ինքը բերել էր հեռաւոր երկրներից։ Այդպէս էր վարուել և Հայրիկը։ ամբողջ Վասպուրականը նրա ընդարձակ ագարակն էր, իսկ ինքը — մի անձնանուէր մշակ։

Այդ մարդը կատարելապէս սիրահարված էր իր Հայրենիքի՝ Վասպուրականի վրա, իսկ Վարագը, Վանը, Վանայ ծովակը իր շրջակայ գաւառներով նրա մտածուլթեան գեղեցիկ առարկան էր։ Բայց նա իր Հայրենիքում նոյն դրուլթեան մէջն էր, որպէս մի ժամանակ Խորենացին Տարօնում։ Կղերը նրա դէմ և լարում էր զանազան որոգայթներ։ Այդ էր պատճառը, որ Ասլանը չիշելով քանի օր առաջ պատահած աղէտաւոր անցքը, և յայտնելով իր խնդակցուլթիւնը նրա ազատուլթեան մասին, ասաց.

— Մի վհատեցէք, Հայրիկ, նահատակուլթիւնը առաքելուլթեան հետ միշտ լծորդաբար է ընթանում։

Հայրիկը պատասխանեց իր սովորական ժպլտով.

— Այդպիսի դէպքեր լինէ չեն կարող վհատեցնել. ես մահից չեմ վախենում, բայց չէի ցանկանայ և մեռնել, որովհետև, ով որ նպատակներ ունի, ով որ գործ ունի կատարելու, կեանքը նրան պէտք է։

Երկար խօսակցուլթիւններից յետոյ, որ մի առ մի չեմ ուզում յիշել, Ասլանը խնդրեց Հայրիկից, որ ցոյց տայ իր վանքի հիմնարկուլթիւնները։

— Մենք ամեն ինչ դեռ նոր ենք սկսում, պարոն բժշկապետ, — ասաց Հայրիկը, — այդ պատճառով մեր հիւ-

բերին ցոյց տալու դեռ մի արժանաւոր բան չունենք։ Մեզ մօտ ամեն ինչ դեռ իր տղայութեան մէջն է։

— Հէնց այդ հասակից կ՚երևայ ապագայ էակը, գոնէ փիլիքական կողմից, թէ որքան առողջ է, և որքան լաւ է կազմված։

— Այդ հաւմարիտ է, բայց շատ անգամ ամենաառողջ տղան և ջլատվում է, այլանդակվում է վատ դայեակների և խորթ մայրերի ձեռքում։

Մենք դուրս եկանք սենեակից։ Վանքի բակում ոչ ոք չէր երևում, մի դոյդ աղաւնիներ միայն, ճեմում էին պարտէզի կանաչազարդ ածուների շուրջը, նրանք և., երբ մեզ տեսան, թռան, նստեցին բարձր դանգակատան գլխի վրա։ Ոչ մի վանքում դանգակները այնպէս հանգիստ չէին, որպէս այստեղ։ Կտուց անապատում նրանք հնչում էին ամեն ժամ, ամեն րոպէ, և հրաւիրում էին «մշտապաշտօն» միաբաններին շարունակելու անընդհատ ժամերգութիւնը։ Իսկ այստեղ մերթ ընդ մերթ լսվում էր դպրոցի դանգակի ձայնը, որ որոշում էր դասամիջոցները։ Աշակերտները խմբով դուրս էին թափվում, և վանական լուռ, խաղաղ պարիսպների մէջ տիրում էր մի կենդանի աղմուկ։ Ոչինչ այնպէս ախորժելի չէ կարող լինել, քան թէ այդ աղմուկը, մանուկ սերունդի սրտի և հոգու ձայնը, որի արձագանքը լսելի է լինում ապագայում...

Հայրիկը տարաւ մեզ նախ դրատունը, որ բաղկացած էր երեք սենեակներից, որոնց դռները բացվում էին միմեանց մէջ։ Երբ մտանք առաջին սենեակը, նա ասաց.

— Այստեղ հաւաքված են բոլոր տպագրուած գրքերը, թէ հայոց և թէ օտար լեզուներով։ Մեր միաբաններից իւրաքանչիւրը կարող է որոշեալ ժամերում մտնել այստեղ և օգուտ քաղել գրքերից։

Սենեակում բաւական լոյս կար. մէջտեղում դրած էր

երկար գրասեղան, ծածկած կանաչադոյն մահուդով, իսկ նրա վրա դասած էին մի քանի լրագիրներ և ամսագիրներ, որ նոր էին ստացվել։ Սենեակի շուրջը, փայտեայ մեծ պահարանների մէջ, կարգով դասաւորած էին գանազան գրքեր, որ երևում էին ապակիների ետևից։ Դէպի որ կողմը և նայում էիր, աչքի էր ընկնում կարգ, ճաշակ, մաքրութիւն և պարզութիւն։ Այս սենեակը թէ գրատուն և թէ ընթերցարան էր, այստեղից մտանք մի այլ սենեակ, որը ցոյց տալով, ասաց Հայրիկը.

— Այստեղ հաւաքված են բոլոր գրչագրերը։

Կահաւորութիւնը նոյնն էր, ինչպէս առաջին սենեակում. մէջտեղում կանաչ մահուդով ծածկած սեղան, շուրջանակի՝ փայտեայ մեծ պահարաններ, և ապակիների ետևից երևում էին մեր բազմաշխատ նախնեաց մագաղաթեայ վաստակները։ Սենեակի ճակատում, ոսկեայ շրջանակի մէջ, քարշ էին ընկած Սահակ պարթևի և Մեսրոպի պատկերները, որոնք առաջին հայերին դիր և գպրութիւն մայրենի լեզուով։

Ես ցաւելով մտաբերեցի Կոստ. անապատի եկեղեցու մթին և խոնաւ աւանդատունը, որի մէջ վոշոմ տակ ծածկված և մի անկիւնում յատակի վրա թաւիված դտանք ամենահարուստ օրինակները նախնի մատենագրութեան։ Ի՜նչ համեմատութիւն այնտեղ և այստեղ...

—Գրքերի ցուցակ ունե՞ք, Հայրիկ, — հարցրեց Սալանը։

— Ունենք,—պատասխանեց նա, դուրս բերելով մի դիրք, որ պահված էր պահարաններից մէկում։ — Մենք դեռ չենք տպում այդ ցուցակը, որովհետև աշխատում ենք հետզհետէ աւելացնել գրչագրերի թիւը։

Սալանը նստեց գրասեղանի մօտ, սկսեց թերթել ցուցակը։

— Դարձեալ բաւական գրչագրեր ունէք, ասաց նա։— Դուք մեծ բարերարութիւն պատճ կը լինէք, Հայրիկ, եթէ

կաշխատէք այս կողմերի բոլոր վանքերից ազատել գրչագրերը և այստեղ հաւաքել։—Եւ նա պատմեց, թէ իր այցելութեան ժամանակ Կտուց անապատի՝ ինչ յաւալի գրքերի մէջ դուռ այդ վանքի գրքերը։

— Բոլոր վանքերում մխիթարեանը կը տեսնէք,— պատասխանեց Հայրիկը։ — Բայց եթէ գիտենայիք թէ որքան գրաժողովութիւնների, որքան անախորժութիւնների եմ հանդիպել, մինչև կարողացել եմ հաւաքել այդ գրքերը։ Մեր վանահայրերը աւելի շուտով յօժարւում են, որ իրանց վանքերում գտնուած գրքերը անխնամ դրութեան մէջ փտեն, ոչնչանան, քան թէ տան, որ մի ազահով տեղում պահվեն։ Իսկ ռամիկ ժողովուրդը բոլորովին այլ կերպ է վարվում. նա իր ձեռքն ընկած գրչագիրը տանում է և մեծ երկիւղածութեամբ թաղում է հողի տակ, ինչպէս թաղում է նա իր սիրելի որդուն։

Սոլանը շարունակում էր թերթել յուցակը։

— Այդ անում են և եկեղեցականները, — ասաց նա, — ես լսել եմ, թէ ինչպէս մի վանքում կատարել էին մի հանդիսաւոր թաղում բոլոր ցեցակեր գրքերի։

— Ես դիտեմ մի այլ, աւելի յաւալի կորուստ,— ասաց Հայրիկը տխուր ձայնով և պատմեց հետևեալ անցքը.

Մի անապատում, որ Հայոց ծովակներից մէկի կղզումն է գտնվում, յանկարծ միաբանութիւնը լսում է, որ կաթողիկոսը գալիս է վանքը, և որպէս դի նորին վեհափառութիւնը վանքի գրքերը իրանց ողորմելի դրութեան մէջ չը տեսնէ, հաւաքում են բոլորը, լցնում են կճուճների մէջ և թափում են ծովը։ Երբ նորին վեհափառութեան նաւակը մօտենում է կղզուն, նա նկատում է, որ մագաղաթի թերթիկները ջրի երեսին լողում են։ Ալիքները նրանցից մէկը բերում են և խփում վեհափառի նաւակի կողքին։ Նա ձեռքը մեկնում է և վեր է առնում դժբախտ թերթը։ Պատահմամբ դա լինում է Խորենացու գրքի հէնց

այն կտորը, որտեղ գրված է լինում նրա սպասը ողբը, որի մէջ նա այնքան դառն կերպով նկարագրում է իր ժամանակի եկեղեցականների անպիտանութիւնները։ Վեհափառի Հանդէպ, նաւակի մէջ նստած է լինում կղզու վանահայրը, որ դուրս էր եկել ցամաքը նրան ընդունելու։ Վեհափառը տալիս է նրան կարդալու սպասը ողբի հետեւեալ տողերը։ «վարդապետք տխմարք» և այլն...

— Այդ պատմութիւնը, որքան հետաքրքիր, այնքան և տխուր է, — ասաց Ասլանը։ — Բայց ես լսել եմ, որ մեր կաթողիկոսներից մէկը նոյնպէս ազատ չէ եղել մի այդ տեսակ մեղքից։ Նա իր նախորդների յիշատակները ոչնչացնելու համար, այրել է տուել նրանց գործերի բոլոր ատենական թղթերը։ Բայց ես շատ ուրախ եղայ, որ ձեր ցուցակի մէջ գտայ, բացի գրքերի անուններից, և մի ամբողջ շարք դանագան կոնդակների, դանագան հրովարտակների, պարսից և տաճկաց թագաւորներից ստացված, դանագան պայմանագրերի և հին կալուածագրերի, — այդ բոլորը կարող է առաջ նիւթ տալ պատմութեան։

Մատենադարանի մի առանձին պահարանում հաւաքված էին հայոց ամենահին տպագրութիւնները, որոնք եղել էին մի քանի դարեր առաջ Վենետիկում, Հռոմում, Միլանում, Նոր-Ջուղայում, Ամստերդամում և այլ տեղերում։

Դրչագրերը քննելուց յետոյ, մտանք երրորդ սենեակը, որ աւելի ընդարձակ էր քան առաջինները։

— Այդ մեր թանգարանն է, - ասաց Հայրիկը, - բայց դեռ սղքատ թանգարան, որովհետև շատ ժամանակ չէ, որ գոյութիւն ունի։

Ը նայելով, որ Հայրիկը խիստ համեստութեամբ էր վերաբերվում դէպի իր թանգարանը, բայց այդ սենեակը աւելի քան միւսները գրաւեց իմ ուշադրութիւնը։ Ի՞նչեր ասէք այնտեղ չը կային։ Ինչ որ միտնգամ գտնուել էր Վանայ շրջակայքում կամ նրա աւերակների մէջ, հաւաքել

էին այնտեղ։ Մի տեղ, փոքրիկ գզրոցներում, որոնց վերևի երեսը ծածկված էր ապակիով, դասաւորած էին զանազան հին դրամներ։ Մի տեղ, նոյնպիսի գզրոցներում, կային զանազան կանացի զարդեր, որպիսի են՝ ականջի օղեր, ապարանջաններ, յուլունքներ և այլն։ Մի այլ տեղ կային հնադարեան զէնքեր. սղնձեայ ծանր վահաններ, սեպաձև արձանագրութիւններով և առասպելական դրոշուածներով զարդարած, նիզակների և նետերի ծայրեր, տապարներ, աղաւաղտների և գրահների կտորներ,—բոլորը պղնձից։ Այդ բոլոր հնութիւններից իմ ուշադրութիւնը գրաւեցին երկու փոքրիկ արձաններ միայն, որոնցից մէկը պատած էր ոսկով և ներկայացնում էր մի դեռահաս կին։ Նա այնքան դեղեցիկ էր, որ ես պատրաստ էի ծունը չոքնել և երկրպագել նրան։ Երբ իմ հոգեմտաւորութիւնը յայտնեցի, հայրիկը ծիծաղելով ասաց.

— Մեզ ևս մի ժամանակ մեղադրում էին այդ մեղքի մէջ։

— Ի՞նչպէս, — հարցրեց Ասլանը։

Հայրիկը պատմեց մի քանի հետաքրքիր անցքեր, թէ որքան անախորժութիւնների է հանդիպել թանգարանի պատճառով։ Թանգարանը շինվում է գլխաւորապէս այն նպատակով, որ այնտեղ հետզհետէ հաւաքվեն բոլոր հնութիւնները, որոնք խիստ յաճախ գտնվում են վանայ շրջակայքում, և ժողովուրդը նրանց նշանակութիւնը չը հասկանալով ոչնչացնում է։ Օրինակ, պատահել էին այսպիսի դէպքեր. մի գիւղացի գտել էր մի մեհեանի երկաթեայ գոհարանի մի մասը, տարել էր գարբնի մօտ, կոտրել էր տուել և իր համար արդրի լոսի էր պատուիրել։ Մի այլ գիւղացի գտել էր Սեննեքերիմ Թագաւորի փղոսկրեայ գահի առաջին ոտները, խիստ չնչին արժէքով վաճառել էր մի զինագործի, որը գնել էր խէնջալի կոթեր շինելու համար։ Մի քանի տարի առաջ մխանգամից գտնվում են այն երկու ար-

ձանները, որ մենք տեսանք Թանգարանում: Հայրիկը մեծ դժուարությամբ կարողանում է ազատել այդ դեղեցիկ հնությունները ռամկի մոլեռանդությունից. «կուռքեր են» ասելով, ամեն կողմից հաւաքվում են և կամենում են վշրել: Նրանցից մէկը յայտնի չէր, թէ ինչ աստուածութիւն էր ներկայացնում, իսկ միւսը, այն գեռահաս դիցուհին, որի գլխակների մէջ փայլում էր մի ճաճանչաւոր աստղ,— դա կարծվում էր, թէ պէտք է Վասպուրականի տիկինը՝ Աստղիկը լինի: Արձանները տեղաւորում են Թանգարանի այն մասնում, ուր աւելի լոյս կար և որտեղ դրած էր մի Հին Աստուածամօր պատկեր: Անցնում են մի քանի օրեր, յանկարծ զայրացած խուժանը յարձակվում է վանքի վրա, վռնդր է մնում, որ կործանէ Թանգարանը և ոչնացնէ ամեն ինչ: Հայրիկի երկար աղաչանքները հազիւ կարողանում են մեղմացնել խառնիճաղանճի կատաղութիւնը: Նրա յուզմունքի պատճառը այն է լինում, որ Թանգարանը համարում է մի կռքատուն, ուր Աստուածամօր պատկերը դրած է կուռքերի մօտ և նրանց հետ հաւասար պաշտվում է:

— Միամիտ խուժանը կարող էր այդպէս մտածել,— ասաց Հայրիկը իր պատմութիւնը վերջացնելուց յետոյ,— բայց ցաւալին այն է, որ նրան դրգռել էին մեր դէմ իմ Թշնամի եկեղեցականները: Ես հաւատացած եմ, որ նրանք այդ արել էին ոչ Թէ չարամտութեամբ, ոչ Թէ մեր վանքին վնասելու նպատակով, այլ իրանք էլ համոզված էին, որ մենք վանքումը կուռքեր ենք պաշտում, եթէ ոչ, նրանց կարծիքով, ի՞նչ նպատակ կարող էր ունենալ, որ մենք կուռքերի արձանները վանքն էինք տարել և դրել էինք Աստուածամօր պատկերի մօտ:

— Իսկ եթէ իրանց պատահում է կուռքերի արձաններ դտնել, ի՞նչ են անում,— հարցրեց Աոլանը, աչքերը չը հեռացնելով Աստուածամօր պատկերից, որի մասին էր խօսքը:

— Փշրում են, ոչնչացնում են։

— Իսկ այդ Աստուածամայրը հրաշալի բան է,—ասաց Ասլանը, շարունակելով նայել պատկերի վրա։—Դա, որպես երևում է, XV-րդ դարու իտալացի երևելի նկարիչներից մեկի գործն է։ Բայց ինձ զարմացնում է այն, թե ինչպես է պատահել, որ այդ պատկերը յայտնվել է այստեղ։

— Շատ հաւանական է,—ասաց Հայրիկը,—որ բերված լինի այն ժամանակներում, երբ վանեցի վաճառականները Վենետիկի և Իտալիայի հետ յարաբերութիւններ ունէին։ Բայց դիտէք, որտեղից եմ դուրս բերել այդ պատկերը։

— Որտեղից։

— Մի կիսաւեր գիւղական եկեղեցուց, որի հայ բնակիչները բոլորովին սպառուել էին և նրանց տեղը քրդեր էին բնակվում։ Այդ վերջինները, գոյք իրանք ևս հայկական ծագումից լինելով, դեռ պահպանել էին իրանց հաւատը թէ դէպի եկեղեցին և թէ դէպի նրա սրբութիւնները։

Աստուածամօր պատկերը, որի մասին այնքան հիացած խօսում էին թէ Ասլանը և թէ Հայրիկը, ինձ ամենևին չէր գրաւում, գոյէ այն պատճառով, որ ես գեղարուեստի մասին ամենևին դաղափար չունէի։ Ներկերը, որ առաջուց ևս խիստ մռայլ գոյն էին ունեցել, ժամանակների ընթացքում, աւելի և աւելի սևացել էին խունկի և մոմի ծուխից։ Մի տեղում մոմը, ինչպես երևում էր, լուսարարի անհոգութիւնից ընկած է եղել և այրել էր Աստուածամօր գլխում մանուկ Յիսուսի ոտները, մի այլ տեղում կաւէ պատռած էր։

Հայրիկը ցոյց տուեց մեզ մի այլ հնութիւն, որը, որպես ասում էր նա, Արծրունեաց իշխանուհի օրիորդներից մեկի ձեռագործն էր, որ նուիրված էր Վարագայ վանքին։ Սեղանի ծածկոց էր այդ դեղեցիկ աշխատութիւնը, որի վրա օրիորդի ճարտար մատները ստեղծագործել էին զանա-

զան պատկերները ս. Գրիգոր լուսաւորչի չարչարանքներից։

—Շատ անգամ մեր վանքերում կամ եկեղեցիներում պատահում են այնպիսի անօթներ, զգեստներ կամ այլ իրեղէններ, որոնք մաշված, հնացած և գործածութիւնից ընկած լինելով, այնպէս, իբրև մի անպէտք բան, ձգած են լինում եկեղեցիների խորաններում կամ պահարաններում և այնտեղ փտում են։ Երբեմն նրանց մէջ գտնվում են այնպիսի հազուագիւտ իրեղէններ, որոնք, իբրև հնութիւն, արհեստի համար մեծ նշանակութիւն ունեն,—ասաց Հայրիկը,—մենք հոգ ենք տանում հաւաքել այդպիսիները։

—Եւ նա ցոյց տուեց մեզ զանազան սաղաւարտներ, վահաններ, շուրջառներ, եպիսկոպոսական կամ վարդապետական գաւազաններ, հնամաշ դորդերի կտորներ, կաթողիկոսական հողաթափներ և այլ իրեղէններ, որոնք ամենահին ժամանակներում բերվել էին Հնդկաստանից, Չինաստանից, Սալահանի, կամ այլ հեռաւոր երկրներից, որտեղ եղել են Հայոց վաճառականները։

Յետոյ Հայրիկը ցոյց տուեց իր դպրոցը, որը գտնվում էր վանքի շինուածքների մի առանձին բաժնում։ Ես մինչև այսօր տեսած էի երկու դպրոցներ միայն, մէկը՝ տէր Թօդիկի դպրոցը, այն սարսափելի դժոխքը, որի աշակերտը լինելու դժբախտութիւնն էի ունեցել, միւսը՝ Սիմօն պատուելիի դպրոցը, որ տեսայ Վանայ մէջ, և որը իր կազմակերպութեամբ շատ չէր զանազանվում առաջինից։ Այդ երկու հիմնարկութիւններից մէկը Պարսկաստանի՝ միւսը Տաճկաստանի Հայոց մանկավարժութեան կատարելատիպն էր, և գրեթէ երկուսն էլ սահմանված էին մանուկներին բթացնելու, և թէ բարոյալէս, թէ մտաւորապէս ապականելու համար։ Այդ դպրոցներից յետոյ, Հայրիկի դպրոցը, տարակոյս չը կայ, որ աշխարհի եօթն հրաշալիքներից մէկն էր երևում ինձ։ Եւ իրաւ, նա իր տեսակի մէջ առաջին օրինակն էր այդ երկրում, և գուցէ այդ էր պատ-

ճառը, որ իբրև նորութիւն, ենթարկվել էր այնքան հալածանքների։ Ես, ի հարկէ, չէի կարող քննել նրա ներքին, ուսումնական կազմակերպութիւնը, նրա ծրագիրը. ինձ գրաւում էր նրա արտաքինը միայն։ Այստեղ առաջին անգամ տեսայ, որ աշակերտները կարգով նստած էին նստարանների վրա, և ոչ՝ թէ, որպէս տէր Թօդիկի դպրոցում, խառնիխուռն նստոտած էին յատակի վրա, իրանց տակին սփռած ունենալով մի կտոր հասիր կամ այծի մորթի, որ բերում էին իրանց տներից։ Այստեղ առաջին անգամ տեսայ, որ աշակերտները դասաւորած էին զանազան դասատներում, և իւրաքանչիւր դասատան մէջ վարժապետը պարապում էր բոլորի հետ միասին։ Հայց տէր Թօդիկի դպրոցում, առանց ուշադրութիւն դարձնելու նրանց հասակի և ուսման աստիճանի վրա, բոլոր աշակերտներին անխտիր ածել էին մէկ սենեակում, ինչպէս ոչխարներին ածում են մէկ գոմի մէջ, և վարժապետը պարապում էր իւրաքանչիւրի հետ առանձին-առանձին, - մէկը վայելչագրութեամբ էր զբաղված, միւսը ընթերցանութեամբ, ՝երրորդը վարժապետի կօշիկներն էր մաքրում, մի խօսքով, որքան աշակերտներ կային, նոյն թւով և բաժանմունքներ կային միևնոյն դասատան մէջ։ Այստեղ առաջին անգամ տեսայ սև գրատախտակը, որի վրա կաւիճով էին գրում։ Առաջին անգամ տեսայ, որ աշակերտներին սովորեցնում էին առանց փայտի ու ծեծի։ Այստեղ ֆալախկայ, ճիպոտներ, խրատելու քանոն և դրանց նման պատժական գործիքներ չը կային։

Բոլոր դասատները այցելելուց յետոյ, Հայրիկը մեզ տարաւ մի դահլիճ, որտեղ ես տեսայ զանազան Հանքային վէմեր, չորացրած մրջատներ, գոյնզգոյն թիթեռներ և ամենամանր պողոճներ։ Միևնոյն դահլիճում կային զանազան բոյսեր ու ծաղիկներ, այնպէս լաւ չորացրած, որ բնաւ չէին կորցրել իրանց ձևը կամ գեղեցկութիւնը, կային և մի քանի թըռ-

չունների պաճուճապատանիներ, որոնք ինձ այնպէս էին թուում, որ կարծես թէ կենդանի լինէին։

—Այդ բոլորը մեր աշակերտների հաւաքածուն է, պարոն բժշկապետ,—ասաց Հայրիկը, այնպիսի հրճուանքով, որ կարծես ինքն էլ ուրախանում էր իր սանների առաջին երախայրիքի վրա։—Նրանք երբեմն իրանց վարժապետների հետ փոքրիկ արշաւանքներ են կատարում մեր շրջակայ լեռների վրա, և բնութեան մէջ ծանօթանում են բնութեան հետ։

—Դա չատ ադիմութեան մի մեծ քայլ պէտք է համարել, Հայրիկ, ասաց Ասլանը,—որ այստեղ փոխանակ աշակերտներին զբաղեցնելու աստուածաբանական մթին խնդիրներով, սովորեցնում են բնական գիտութիւններ։

—Իմ համոզմունքն այն է, պարոն բժշկապետ,—ասաց Հայրիկը,—որ մեր մանուկների կրթութեան հետ պէտք է կապուած լինի և այն նպատակը, որ նրանք, բացի լաւ քրիստոնեայ լինելուց, դառնան և լաւ արհեստաւորներ և լաւ հողագործներ։ Մեր ժողովուրդը աղքատ է և սոված. նա հաց է պահանջում. պէտք է ուսումը մէջտեղ տայ նրան իր ապրուստը հայթայթելու։ Ես հէնց այդ նպատակով ես միացրի այդ դպրոցի հետ երկրագործական բաժին. իսկ եթէ կը յաջողի ինձ, ժամանակով կաւելացնեմ և մի արհեստանոց։ Իմ վանքի սուրբերը խիստ բարի են և ներողամիտ, նրանք չեն ձանձրանայ սղոցի, խարտոցի և մուրճի ձայնից։

ՐԱՖՖԻ.

ՄԱՆՈՒԿԸ ՕՐՕՐՈՑՈՒՄ

(Նմանողութիւն Շելլեըի)

Նհող ու անվիշտ մանկիկը պառկեր,
Ուրախ ժպտում է նա օրօրոցում.
Լայն է օրօրոց. բոյեր է ձեռքեր
Եւ ազատ, անվախ անդադար շարժում.

Արձակ է տեղը, երջանիկ է նա.
Բայց շատ հեռու չէ, ժամանակ կըզայ,
Նա մարդ կըզառնայ և ասլա կըզպայ՝
Թէ այս աշխարհը, ո՛հ, որքան նեղ է,
Որքան նորանում ապրել դժուար է։

ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑ.



ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ

I.

Թաղաքի վողոցներից մէկում ձղուած էր լզական Գիմնազիոնի հոյակապ շինուէթիւնը: Ամենայն օր, առաւօտեան մօտ ուէթը ժամին, քաղաքի բոլոր ծայրերից աղջիկները դիմում էին դէպի այդ շէնքը ուսանելու: Ոմանք գալիս էին իրանց դաւերնատկանների (դաստիարակչուհի) հետ, միւսներին ծառաներն էին ուղեկցում, կայլին և այնպիսիները, որոնք ձղուած էին սեպհական շքեղ կառքերում և դռ՞ռալով կառքը մօտենում էր Գիմնազիոնի դռանը. բայց շատ շատ էր և նրանց թիւը, որոնք ցեխ ու անձրև չհարցնելով, միշտ ոտով էին քարշ գալիս քաղաքի հեռաւոր թաղերից:

Այդ շատերի թւում, ամեն օր, վրաղ վրաղ, առանց հետ նայելու և միշտ մնայնակ գալիս էր ուսումնարան մի տասնամեայ փոքրիկ աղջիկ: Ուրիշների նման, նա էլ հագած ունէր ուսումնարանական ձևաւոր դարչնագոյն շորերը, բայց այդ շորերը ոչ նրա մարմնին էին վրայ գալիս և ոչ էլ հասակին. երևում էր որ նրանք ուրիշի վրայ էին ձևած: Գլխարկի փոխարէն, նա վաթաթած ունէր գլխին մի սև թաշկինակ, որի տակից դանդուրներով դուրս էին թափուել նրա փայլուն մազերը: Նրա մեծ մեծ, մոխրագոյն աչքերը արտայայտում էին խորին վիշտ և լիախ-

ծուխիւն։ Նա իր գրքերը միշտ առանց պայուսակի՝ կռան տակ դարսած էր մանաճում. նա պայուսակ էլ չունէր։

Աննա Ստոլբինան (այդպէս էր աղջկայ անունը) նոր էր մտել առաջին դասատուն. նրան Գիմնազիոն տուաւ մի «բարի տիկին», որի մօտ առաջ ճառայում էր նրա մայրը։ Նա սկսեց Գիմնազիոնում շատ լաւ սովորել. ամեն նայն օր գնում էր ուսումնարան և ոչ մի դասից յետ չէր ընկնում։ Նա սիրում էր Գիմնազիոնը, թէպէտ ինքն այնտեղ ոչ մի ընկերուհի չունէր. դասամիջոցներին նա միշտ կանգնած էր լինում մենակ, ամենևին չէր խաղում և միշտ տխուր էր։

Նա զգում էր, որ ինքը չէ կարող ընկերուհի լինել այդպիսի քրքրուող աղջկերանցը, որոնք յաճախ իօսակցում էին բաց անում իրանց Հայրիկի և մայրիկի մասին, թէ նրանք հարուստ են, թէ իրանք ամենայն օր փող են ստանում նրանցից քաղցրաւենիք գնելու և իրանց հաճոյքը լրացնելու համար։

Նա գիտէր, որ ինքը ոչինչ չի խօսել էր մօր վրայ, որովհետև այդ տեսակ աղջիկները աղքատներին չեն սիրում. նրանք առանց այն էլ քիթները վեր էին քաշում, երբ նայում էին նրա գոլտորուած մաշիկների վրայ. իսկ հօր մասին նա ոչինչ չունէր խօսելու. նա արդէն մեռել էր։

Ստոլբինան չհամարձակուելով խաղերի ժամանակ մօտենալ նրանց, քաշվում էր մի կողմը և միայն հեռուից նայում էր նրանց կայտառ և անհոգ երեսներին։ Նա նոյնպէս տեսնում էր թէ ինչպէս նրանք տանից բերած զանազան քաղցրեղէնները բաժանում էին իրար մէջ, այն ինչ ինքը հազիւ կարողանում էր մի մսոր չոր հաց բերել ուսումնարան և այն էլ աշխատում էր ամենքից ծածուկ ուտել, որպէսզի ոչոք չտեսնի նրան։ Նա վախենում էր, որ նրանք մի գուցէ կրկին սկսեն ծիծաղել իր բերած հացի վրայ, ինչպէս առաջին անգամը, տեսնելով

նրա հայրը նրանք սկսեցին երեսները ծամածռել և հրհռալով հաղորդում էին միմեանց. «Ստօլբինայի բորբոսնած հայրը»:

Այսպէս ժամանակն անցնում էր, մինչև որ հասաւ ձմեռը և նրա հետ էլ ուսման վարձ տալու ժամանակը: Առաջին անգամուայ վարձն այն «բարի տիկինը» վճարեց, որն աղջկանը տուաւ Գիմնազիոն, բայց այժմ նա արդէն չկար. նա ուր որ գնացել էր:

Գիմնազիոնում յայտարարեցին, որ ուսման վարձը վճարելու ժամանակն արդէն հասել է: Իսկ այնուհետև ամենայն օր աղջկերանցը յիշեցնում էին փողը վճարելու մասին: Բայց Ստօլբինան մօրը ոչինչ չէր ասում: Նա գիտէր որ մայրը փող չունի. նա գիտէր որ իրանք նրա համար են ցուրտ սենեակում նստած, որովհետև փետի փող չունին—ուրեմն լաւ էր լռել, ոչինչ չասել մօրը:

Բայց ահա նշանակեցին վճարման վերջին օրը և վարժուհին խստութիւնով յայտնեց բոլորին. «ով որ վաղը ուսման վարձը չի բերիլ, նրան կարտաքսեն Գիմնազիոնից:» Ստօլբինայի սիրտը ճմլուեցաւ, աչքերը արտասուքով լցուեցան. նրան այնպէս թուաց թէ վարժուհին իրան էր ասում այդ բանը և նա համարեա թէ աղաղակեց. «մայրիկս չէ կարող ուսման վարձ տալ, նա փող չունի», յետոյ սկսեց բարձր ձայնով հեծկլտալ:

Բոլոր երեխայքը լռեցին և անխօս նայում էին հեկեկող Ստօլբինային: Նրանց դէմքերը արտայայտում էին զարմանք և մասամբ ցաւակցութիւն:

Արտասուքը լուռ ու մունջ շարունակում էր հոսել Ստօլբինայի նիհար և դունատուաճ այտերով: «Մինթէ հնչմարիտ ինձ կարտաքսեն» անդադար այս միտքը պտըտվում էր նրա գլխում և երբ նա տուն վերադարձաւ, կրկին ոչինչ չասաց մօրը: Միւս օրը նա վերկացաւ և դարձեալ գնաց Գիմնազիոն: Դուրսը սառը քամի էր փչում և ան-

ձրևախառն ձիւն էր գալիս, թրջելով անբախտ աղջկանը մինչև ոսկորները, բայց նա փետացած և դողալով երկիւղից, ձիւնաթաթախ ոտներով շարունակում էր իր ճանապարհը։ Նա դնում էր դանդաղ և անվստահ քայլերով։ Ահա նա հասաւ Պիմնազիոն, լսուեցաւ դանդակի ձայնը և վարժուհին մտաւ դասատուն. Ստօլբինան նոյնպէս ներս մտաւ ոչ ոքի վրայ չնայելով և յանցաւորի նման գլուխը կախ նստեց իր տեղը։

Վարժուհին խիստ նկատեց նրան։

«Ստօլբինա, փողերը բերեցի՞ր», հարցրեց նա։

— Ո՛չ — պատասխանեց աղջիկը ոտքի կանգնելով և գլուխը վեր չբարձրացնելով։

«Չա՞պա էլ ո՞ւր ես եկել։»

Նա ոչինչ չպատասխանեց և դունաթաւի կանգնած էր։

Դասատան մէջ կրկին լռութիւն տիրեց և ամենքն անխօս նայում էին նրա վրայ։

«Դրքերդ վերցրու, հագնուիր ու գնա տուն, և գիտցիր որ մինչև փողերը չբերես, այստեղ մտնելու իրաւունք չունիս», հնչուեցաւ դերեզմանական լռութեան մէջ վարժուհու ձայնը։

Ստօլբինան թեթև սառաւազ դղաց. նա մի րոպէ լուռ կանգնած մնաց, յետոյ անխօս վերցրեց դրքերը և հրաժարական հայեացք ձգելով դասատան չորս կողմը, դուրս գնաց։

Նա մի կերպ հագաւ իր հնացած վերարկուն, թաշկինակը փաթաթեց գլխին և դուրս եկաւ փողոց։ Ձիւնը շարունակում էր գալ և քամին առաջուայ նման փչում էր։ Նա նոյն անհաստատ քայլերով ուղևորուեցաւ դէպի տուն։ Ճանապարհին նա ոչինչ չէր տեսնում և ոչ էլ նրա ականջները մի բան լսում էին. նա հենց այն էր մտածում թէ՝ որքան ծանր է յանցանս թողնել Պիմնազիոնը, ինչպէս այժմ ինքն էր թողնում...

Նրա թաց ոտները սկսեցին ցրտից փետանալ և նա հազիւ էր շարժվում։ Նրա գլուխը չնայելով ցրտին, կարծես կրակի մէջ այրվում էր. արտասուաց վտակները անդադար հոսում էին նրա երեսի վրայով և որից ցուրտը աւելի զգալի էր դառնում նրա համար։ Տուն վերադառնալով նա դարձեալ ոչինչ չասաց մօրը. միայն անկողնի վրայ ընկաւ և սկսեց անզսպելի ձայնով հեկեկալ։ Մայրը զարմացած և մասամբ էլ վախեցած մօտեցաւ աղջկանը և հարցրեց. «Ինչո՞ւ համար այդպէս շուտ վերադարձար դու Գիմնազիոնից։»

Պատասխան չկար։

«Չ՞ը, ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞ւ ես լալիս։»

Դարձեալ պատասխան չկայ. լսվում են միայն խուլ հառաչանքներ։ Կամակոր, փնթփնթաց նա քթի տակ և դուրս գնաց սենեակից։

Սօլբինան դեռ հեկեկում էր, յետոյ փոքր առ փոքր սկսեց հանդարտուիլ և ’ի վերջոյ բոլորովին լռեց. նա քնեցաւ։ Երկու ժամից յետ, երբ մայրը նորից ներս մտաւ, նա արդէն հանգիստ պառկած քնած էր։ Նա մինչև լրիզուն քնեց առանց տեղիցը շարժուելու. միայն երբեմն շուռ ու մուռ էր գալիս և անկապ անկապ խօսքեր արտասանում։ Մայրը տեսնելով որ նա առանց հանուելու է պառկել, մօտեցաւ աղջկանը և ձեռքիցը բռնեց, որպէսզի արթնացնէ, բայց խոկոյն ցնցուելով աղջկայ ձեռքը բաց թողեց. իր ձեռքը դրաւ նրա ճակատին... նա ամբողջապէս այրվում էր։ Նա ականջը մօտեցրեց և լսում էր նրա շնչառութիւնը... նա ստէպ ստէպ էր շնչում։ Մայրը զարմացած այս բանի վրայ մի րոպէ անշարժ մնաց, յետոյ խոկոյն գնաց իր դրացուհու մօտ, խորհուրդ հարցրեց նրանից և գնաց բժիշկ բերելու։

Բժիշկն եկաւ, նայեց աղջկանը և պատուիրեց հանել վրայից շորերը ու պառկեցնել անկողնում։ Յետոյ դեղ գրեց հիւանդի համար և յայտնեց որ շուտով նա չերմախտ կունենայ։

II.

Անցաւ երեք օր: Ուսուցչուհին նկատեց դասատանը Ստօլբինայի բացակայութիւնը, որին նա շատ էր սիրում նրա խելացի և համարձակ պատասխանների համար: Նըրան դարմայրեց այն, որ Ստօլբինան, որը միշտ կանոնաւոր կերպով յաճախում էր դասատուն, ահա արդէն երեք օր է դասերին չէ երևում:

«Երեխայք, Ստօլբինան հիւանդ է», հարցրեց նա աշակերտուհիներին:

«Ո՛չ», երկչոտութիւնով պատասխանեցին մի քանի ձայներ, բայց նոյն միջոցին մէկը վերթռաւ տեղից և առաց. «Նրան դուրս արին:» «Ինչո՞ւ համար», հարցրեց ուսուցչուհին անչափ բարկացած: «Նա չվճարեց ուսման վարձը», շարունակում էր տեղեկութիւնները տալ նոյն աղջիկը: «Ա՜...» մի տեսակ մտախոհ և վշտալի ձայնով արտասանեց ուսուցչուհին և երկար նստած ինչ որ մտածում էր: Երբ զանգահարութիւնից յետ վարժուհին ներս մտաւ դասատուն, նա շտապով մօտեցաւ նրան և հարցրեց Ստօլբինայի հասցէն. այդ միջոցին նրա ձայնը մի ինչ որ օտարոտի հնչումն ունէր և նրա գլխում անդադար պտրտվում էր. «խեղճ, անբախտ աղջիկ:» Նա հազիւ հազ սպասեց դասերի վերջանալուն, հասցէն վերցրեց և գնաց Ստօլբինայի մօտ:

Նա երկար փնտռում էր նրան, որովհետև Ստօլբինան ապրում էր քաղաքի մի խուլ թաղում, ուր գտնվում էին բաղմաթիւ նեղ ու խուլ փողոցներ: Վերջապէս նրան ցոյց տուին բաղում գտնուող փոքրիկ պատուհաններով և ցածր պռնով մի տուն, որտեղ ապրում էր պառաւ Ստօլբինան:

Նա համարձակ ներս մտաւ սենեակը, մտածելով մի

ուրախալի լուր հաղորդել նրանց, բայց հէնց դրան շեմքում նա ապշած կանգ առաւ. փոքրիկ, ցածր առաստաղով սենեակում, պատի մօտ դրուած էր մի մահճակալ, որի վրայ նիհարած, դունաթափ և աչքերը գոց պառկած էր նա, որը երեք օր առաջ նստարանի վրայ նստած ուշաղրութիւնով լսում էր դասերին: Այժմ դժուար էր նրան ճանաչել: Մայրն արտասուքն աչքերին նստած. նրա մօտ նայում էր աղջկայ երեսին, բայց երբ ուսուցչուհին ներս մտաւ, նա իր աչքերը կամաց դէպի նա դարձրեց և նայելով նրա երեսին, կարծես, ուզում էր հարցնել թէ ինչո՞ւ էր եկել նա: Ուսուցչուհին նկատեց այդ հայեացքը և սթափուելով հարցրեց. «Այդ ինչ է պատահել դրա հետ»:

«Նա... հիւանդ է», պատասխանեց մայրը միակերպ ձայնով և շարունակելով անընդհատ նայել մտնողի երեսին:

«Դուք չգիտէք ինչից է նա հիւանդ», համարեա թէ մեքենայաբար հարցրեց ուսուցչուհին, ինքն առաջուց դուշակելով, որ նրա հիւանդութեան պատճառը Գիմնազիոնից արտաքսելն է:

«Երևի մրսել է. բայց ձեզ ինչ հարկաւոր է լմանալ այդ», հարցրեց մայրը կասկածանքով:

«Ինձ... ես Գիմնազիոնի ուսուցչուհի եմ, եկել եմ նրան ասելու... ես ուզում էի նրան տեսնել... ես չգիտէի թէ նա հիւանդ է... նա երբ հիւանդացաւ», ասում էր նա անընդհատաբար, խօսքը չվերջացնելով և նրա մտքով դարձալ անցաւ. «խեղճ, անբախտ աղջիկ»:

Մայրն լմանալով որ ներս մտնողը ուսուցչուհի է, խնդրեց նստել և միառմմի սկսեց պատմել թէ ինչպէս մի դուրս օր Աննան Գիմնազիոնից վաղ վերադարձաւ, թէ ինչպէս նա ամբողջ օրը լալիս էր, ինչպէս նա հիւանդացաւ, ինչպէս բժիշկն եկաւ...

«Յետոյ բժիշկն ինչ ասաց», ընդհատեց նրան ուսուցչուհին:

«Ասաց, որ նա տենդի մէջ կընկնի և տենդի ժամանակ էլ զառանցում է. երէկ նա միայն մէկ անգամ է զառանցել...

«Լաւ, յետոյ ինչ էր ասում նա զառանցանքների մէջ», նորից ընդհատեց ուսուցչուհին նրա խօսքերը:

«Այնպէս առանձին ոչինչ չի ասել, միայն Փիմնազիոնի մասին էր խօսում, ես, ասում է, ուզում եմ Փիմնազիոնը գնալ. անպատճառ ես կըզնամ այնտեղ, էլ ուրիշ ոչինչ չէր ասում»:

«Բժիշկը յաճախո՞ւմ է ձեզ մօտ»:

«Երկու անգամ եղել է. նա խոստացաւ այս իրիկուն էլ գալու, չգիտեմ կըգայ, թէ ոչ:

«Ես երեկոյեան կըմտնեմ ձեզ մօտ. ուզում եմ բժշկին տեսնել և մի բանի մասին հարցնել նրան», ասաց ուսուցչուհին և պատրաստուեցաւ տուն գնալու:

Նա դուրս եկաւ փողոց. սակայն դեռ նրա աչքի առաջ պատկերանում էր նոյն նիհար և գունաթափ աղջիկը, որ պառկած էր մահճակալի վրայ...

«Մի՞թէ նա պիտի մեռնէ»... անդադար կրկնում էր նա անհանգստութիւնով:

Երեկոյեան նա նստած գտնուեալ հիւանդի անկողնի մօտ, բժշկին էր սպասում: Նա այժմ միայն աչք ածելով սենեակի չորս կողմը, պատուհանի մօտ նկատեց մի փոքրիկ սեղան, որի վրայ գտնւում էին հիւանդի գրքերը, տետրակները և մի հատ դեղաշիշ: Պատուհանում գտնուում էր մի քանի ծաղկամաններ ծաղիկներով. պատերը մերկ էին, միայն սենեակի մի անկիւնում կախուած էր Քրիչէի պատկերը: Նա աչքերը գցեց դէպի միւս կողմը. այնտեղ դրուած էր մի կարմրագոյն սնդուկ, սեղան, սեղանի վրայ հեշտաեռ և մի ինչ որ աման... Բայց այդ միջոցին ով որ բացեց դուռը և ներս մտաւ. դա բժիշկն էր:

Նա մօտեցաւ հիւանդին, շօշափեց նրա ճակատը և

Հարցրեց՝ թէ զառանցել է արդեօք Հիւանդը, արդեօք դեղը խմել է և ինչ է կերել: Մայրը պատասխանում էր նրա բոլոր Հարցերին: Ուսուցչուհին երկիւղով մօտեցաւ նրան և Հարցրեց մի ինչ որ. բժիշկը նրան պատասխանեց և նրա դէմքը փայլեցաւ:

III.

Միւս օրը ուսուցչուհին եկաւ Գիմնազիոն և շիթաթուած ներս մտաւ դասատուն: Երկար նա նստած էր լուռ, վերջապէս մի փոքր շիթոթուած ձայնով ասաց.

«Երեխայք, Սոլբինան այն պատճառով չէ յաճախում ուսումնարան, որովհետև նա ուսման վարձը վճարելու կարողութիւն չունի: Հաւաքեցէք քիչ-քիչ... ով որքան կարող է և վճարեցէք նրա փոխարէն...»:

«Ձնատ բարի, շատ բարի»... ուրախացած աղաղակեցին մի քանիսները և յետոյ բոլորն էլ սկսեցին իրար մէջ քչփչալ:

«Մայրիկս ինձ անպատճառ կըտայ», ասում էր մէկը»... Ես դրքի Համար կըխնդրեմ, իսկ այդ փողերը կըտամ Սոլբինայի փոխարէն», ասում էր միւսը: «Էլ քաղցրեղէնները չեմ ուտիլ, փողերս կըհաւաքեմ ու ես էլ կըտամ»... ասում էր երրորդը ուրախացած, նստարանից վեր ցատկելով: Այսպէս ամենքը ցանկութիւն յայտնեցին փող բերելու, ամենքը ուրախ էին, որ ա ղ ջ կ ա ն ը կը փ ր կ ե ն:

Այս դէպքից յետոյ անցաւ շատ ժամանակ: Սոլբինան շարունակում է իր ուսումը Գիմնազիոնում:

ԵԻԳԵՆԵՍ ՎՕՐՕԲԵՕՎԱ.

Թարգմ. Ա. Ի-ՔՍԱՆԴՐ ՔԱՏՈՒՐԵԱՆ ց.

ՄԱՆԿԱԿԱՆ ՖԼԼԻԷՏՕՆ

ԵՒՐՈՊԱՑԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՐԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

I

Իրելի ընթերցող, գուցէ դու կարծում ես որ ես մտադիր եմ քեզ անբան անասունների արտաքին տեսքը նկարագրել, որ իմանաս թէ քանի ոտք ունի ամեն մէկը, քանի աչք, քանի ականջ, քանի քիթ, պոչը կարճ է թէ երկար, մազոտ թէ անմազ, միսը, կաշին, ոսկորները բանի պէտք են գալիս թէ ոչ, կամ աւելի խորը գնանք — քանի ատամ ունի, որկորը նեղ է թէ լայն, ստամոքսը քանի պարկ ունի, սիրտ, թոքեր, աղիք-մաղիք ինչպէս են դասաւորուած և այլն և այլն։ Ոչ, ամենևին. մի՛այն ես կուզենամ քեզ ծանօթացնել թէ ինչ հանգամանքներում է ապրում Եւրոպայի և Կովկասի անբան անասունը, որ իմանաս թէ որչափ իրաւացի են պ. Աղայեանցի ասած խօսքերը, թէ՝ «խելօք եւրոպացիների մօտ լիմար անասուններն էլ խելօք են, իսկ մեզ մօտ լաւ անասուններն էլ են լիմարանում»։

Ես չեմ երկարացնիլ խօսքս ու կըսկսեմ է շ ի ց։

Ձեմ կարծում որ էշ տեսած չլինիս, այն կենդանին, որին երկայնականջ էլ են ասում մեզանում և մեծ թէ

փոքր Համոզուած են, որ նրա պէս չիմար արարած չկայ աշխարհումս։ Յիրաւի, կանգնիր էշի դիմացը, մի լաւ նայիր նրա քիթ ու մռութին, դդումի պէս կախ ընկած կարկաժ գլխին, լատան-լատան ականջներին, խոշոր ու թմրած աչքերին, տգեղ կերպարանքին ու շարժուածքին և կըտեսնես որ էշ անունը շատ սազ է գալիս նրան։

Ձուռ տուր աչերդ նաև մի ւս էշերի վրայ, սև լինին նրանք թէ մոխրագոյն, մեծ լինին թէ փոքր, դիւղում լինին ապրում թէ քաղաքում, դարձեալ նոյն չիմար, նոյն թմրած, կեանքից ձանձրացած էշերն են։ Բայց ինչու այդպէս են, գուցէ կըհարցնէք ինձ, երևի Աստուած դըրանց էլ թմրած է ստեղծել։ Ամենևին, կըպատասխանեմ ես, և կըհամոզուիս ասածիս, եթէ տեսել ես և կամ կըտեսնես փոքրիկ էշերին—իշուկներին։

Մեզանում իշուկը, քանի որ մէջքին փալան չի դըրուել ու կողքերին ճիպոտ չի դիպել, մի շատ ուրախ ու կայտառ կենդանի է. նա մարդից չէ քաշվում, ում ասես մօտենում է, հոտոտում, ականջները խլըշում, լոք-լոք անում, աջ ու ձախ թռչկոտում, կապկութիւններ անում, մի խօսքով նա շատ գրաւիչ է իր խաղերով, բայց ոչ մեծերն են ուշադրութիւն դարձնում նրան և ոչ էլ փոքրերը, և մի թէ արժէ իշուկը այդ պատուին... Մեր իշուկի տարին դեռ չլրացած, տեսնում ես խեղճի մէջքին մի ծանր փալան դրին, փորքաշով պինդ կասկպեցին ու մի քանի փութ ծանրութիւն բեռնեցին դիւզ կամ քաղաքը տանելու։ Մեր իշուկի ուժը չէ պատում այդ բեռանը, նա ճրկրռ-ճրկրռ է անում, մէջքից երկտակվում է, ոտքերը դողդողում են, ուզում է ճխլուիլ բեռի տակ, մէկ էլ յանկարծ տիրոջ ճիպոտը գաւակին այնպէս է շրմփում, որ գարմանքից թէ սարսափից երկու գազ առաջ է թռչում։ Էլ կըհամարձակուի մեր իշուկը տեղը կանդնել կամ ճրկրռիլ, ճիպոտը միշտ ճմճմում է ետևից, ինչքան ուզում

է թող մէջքը կոտրուի, ով է նրան հարցնողը...

Գնում է տնքալով մեր իշուկը, քրտինքը ջրի պէս վազում է նրանից, բերանը փրփուր է կապում, աչքերը մթնանում են ու ծռւում է ճանապարհից. ճիպոտն ուղղում է նրա ծուռ քայլը. ուշքը գլուխն է գալիս, տեսնում է որ իր երազած երջանիկ աշխարհը չէ սա, ուր միշտ կարելի է տրտինդներ տալով ապրել. մի րոպէ մըտածում է փախչել տիրոջից, սրում է ականջները, խլշում դէսուդէն, բայց մի կողմից բեռն է ճնշում, միւս կողմից «չո՛ւ, թո՛չ, թո՛չ» լսվում է տիրոջ սպառնալի ձայնը...

Ձարունակում է լուռումունջ իշուկը իր ճանապարհը, աչա յանկարծ տեսնում է քթի տակին գլխները բարձրացրած փախուկ ու զիլ-զիլ խոտեր, բա ն ճ ա ր ն ե ր, ախորժակը բացվում է, դլուխը ծռում է դէպի բոյսը, բերանը լայն բանում ու հէնց որ ուզում է հա՛պ—կծել, տիրոջ դագանակը թրը՛խկ, դիպչում է չոր գլխին. աչքերը կրակ են անում ու պատրւկ ծնօտները իրար չրը՛խչրը՛խկում...

Գալիս է մի առու. գը՛լ-գը՛լ-գը՛լ քչքչում է ջուրը, մեր իշուկը տաքից խաշվում է, նրա լեզուն պապակում է, մէկ մտածում է վրայ ընկնել մի լաւ խմել, բայց դեռ մտքիցը չէ անցել տիրոջ դագանակի զօրութիւնը, դեռևս մրմնջում է խփած տեղը, ուստի այս անգամ թողնում, անցնում է։ Գալիս է երկրորդ առուն, երրորդը, մէկը միւսից աւելի պարզ, աւելի վճիտ. ծարաւը աւելի ևս տանջում է, ճար չկայ, որ մեռնի, պիտի խմէ այս անգամ և ահա վիզը երկարացնում է, գլուխը կախում կամաց ու դեռ խեղճը հաստ շրթունքները ջրի երեսին չդիպցրած՝ շրը՛մի էլի դագանակը հասնում է դնչին...

Աչքերը ճպճպալով ու ներքևի շրթունքը կախ գցած, տխուր հեռանում է առուից, ահա նրան պատահում են իր ծանօթներից ու ազգականներից շատերը. որը իր նման բեռնուած է, որը անբեռն. նկատում է նրանց մէջ և իր

Հին ընկեր Ձալէշին, կուրծքը զանգակներով զարդարուած. մի րոպէ մոռանում է իշուկը իր վիշտը, հեռուից զուիկ-զուիկ անելով նրան բարևում և քայլերը արագացնում է, որ մի րոպէ շուտ բարեկամի տեսութեան արժանանայ: Ձալէշն էլ պակաս կարօտ չէ նրան և ահա երկու հին բարեկամները դէմուդէմ են գալիս, քիթ-քիթի դնում, մէկմէկու հոտոտելով բարևում, և դեռ իրարու ցաւը չհարցրած, իրարու կարօտը չառած, փայտը թրաքակ դնպչում է երկուսի քթին ու բաժանում...

Վերջապէս հասնում է մեր իշուկը տուն բոլորովին թուլացած, բոլորովին յուսահատ. բեռը վեր են առնում մէջքից, մի քիչ դարման կամ չոր խոտ թափում առաջը որ ուտի: Ագահութիւնով մի երկու բերան հախտում է կերակուրից ու չետ կանգնում խռոված երեխի պէս, դարմանը խոնաւ կամ փոշոտ է լինում, խոտը վատ ժանգալներով, կածուկներով լիքը, այնպէս որ ուտելուց տաշում է բերանը: Մի երկու ժամից նրան ջուր են տալիս, նոյն ագահութիւնով խմում լցնում է դատարկ փորը. այժմ աղորժակը աւելի ևս բացվում է, բայց էլի նոյն կերակուրն է առաջին, ուզէ չուզէ պիտի ուտէ...

Այսպէս նա մի կերպ փորի հոգսը վերջացնում է թէ չէ, այժմ նրան անհանգիստ են անում մի կողմից իշաճանճերը, միւս կողմից ականջներում հաւաքուած լուանները, փորին ու ոտերի կպած տիղերն ու ցեխի փշուրտանքը, մէջքին չորցած քրտինքը, փալանի հարած տեղերը, մի խօսքով նրա ամբողջ մարմինը քոր է գալիս. ինչ անէ, լեզու չգիտէ որ իր դրութիւնը մարդկանց հասկացնէ, ձեռներ չունի, որ ինքն իրան քորէ. շատ շատ ատամներով կարողանում է միայն առջևի ոտերն ու գաւակը դրպել և գետնով պոչը տատանելով ճանճերին փախցնել, բայց փորը, մէջքը. նա զզզում է մի քանի անգամ, բայց չէ, տէրը խաշևը չէ բերում. ճարահատեալ նա չոքում է, թմփ ընկնում

կողքի վրայ, ոտները օդի մէջ բարձրացնում, պարան-պարան գալիս ու թաւալ տալիս. վայ նրան եթէ տէրը այդպիսի դրութեան մէջ տեսաւ, դարձեալ անիծած դագանակը փշրվում է գլխին... բայց շատ անգամ էլ պատահում է, որ մեր մոխրաթաւալը տեղից բարձրանալուց, այ քեզ բան, վալանը շուռ է դալիս ընկնում փորի տակը ու փորքաշը կտրում մէջքի սեռը. ամբողջ ժամերով նա անշարժ մնում է այդպէս և անիծում իր թաւալ տալու ժամը . . .

Ծոլորում է իշուկի չարչարանքի երեք տարին, այժմ նրա հետ հանաք անել չի լինիլ. նա թողել է իր առաջուան խնդիկ-խնդիկ անելը, թռչկոտալը, ուրախ-ուրախ զռզռոցը, լաւ քէֆի ժամանակ շան, կատուին ու չոր երեխայոց մի-մի աքացի խփելը. այժմ ճիպոտից էլ չէ վախենում, ինչքան ուզում ես հասցրու, նրա համար ողջ մէկ է. կեր ու խումի մէջ էլ նազ ու սազ չկայ, ինչ որ տալիս են, ինչքան բեռնում են, ուր որ տանում են, նա անտրտունջ հպատակում է. մի խօսքով նա կատարեալ էշ է դարձել...

Եւ ահա մենք այդ էշին տեսնում ենք ինչպէս գլուխը քաշ, տնքալով, չորս – հինգ փութ մէջքին, շատ անգամ էլ տէրը վրայից նստած, ոտերը դետնին քսքսուելով, գիւղը կամ քաղաքն է մտնում. նրան տեսնում ենք և մեր հրապարակներում, ուր անձրևի, ցեխի կամ ձիւնի մէջ փայտի, փշի, քարի, հողի, աճուխի կամ մրգեղէնի բեռան տակ, սուաց, ծարաւ վեց եօթը ժամ շարունակ մնում է ականջները կախ կանգնած և մեծ թէ փոքր արհամարհանքով նայում են նրան, թօշ-թօշ ասում ու անցնում...

Տարիները անցնում են և մեր էշը պառաւում է ու առաջուայ ունեցած յարգանքն էլ կորցնում. նրան այժմ օրերով չեն քորում, գարի չեն տալիս, առանց դրան էլ նա կարող է ապրել, մտածում է տէրը. բայց թէ փալանը

և թէ ծանր բեռը նրանից չէ հեռանում, ինչ վնաս թէ ծերացել է: Մի բան որ էշի կեանքում փոխուել է այդ ծեծի եղանակն է. նրա կաշին ծնուած օրից սկսած դադանակի հարուածների տակ այնպէս թմրել անզգայ է դարձել, որ էլ թակը նրան չէ ներգործում. ուստի այժմ հնարագէտ տէրը բզած վայրէ է բանեցնում, որ դղդղալով ծակում է խեղճի կաշին ու աչքերից ջրեր թափեցնում. վայ նրան, որ մի քիչ դանդաղ դնաց ու հազար վայ, երբ պառաւ էշը ցեխի մէջ մնայ կամ սառուցի վրայ գնալուց սահի ընկնի ու չկարողանայ տեղից շարժուել. էլ ուր, քիթ, բերան, դլուխ ողջ տեղ չի մնալ, ջարդուփշուր կըլինի: Նա ամենայն ուրախութիւնով իր շունչը կըփչէր ընկած տեղը, եթէ մարդիկ պոչից, ոտից, դլխից բռնած՝ ծեծելով չբարձրացնէին ու բղբղելով էլի առաջ չքշէին . . .

Այսպիսի դառն օրերի մէջ անց է կացնում մեզ մօտ էշը իր կեանքը և տասը-տասնհինգ տարին դեռ չհասած, մի օր բեռան տակ ընկնում, ոտքերը մի քանի անդամ դետնին խփում ու յաւիտեանս աչքերը փակում:

Խեղճ անասունի սաոկելուց յետոյ էլ հանդիստ չէ թողնում տէրը, աքցանով հանում է սմբակներից միերն ու պայտը, կաշին մաշկում տրեխների համար, իսկ դիակը՝ մի թոկ կապելով, քաշ տալիս դէպի ձորը... այնտեղ միայն ազատւում է նա իր վալանից ու տիրոջ դագանակից...

II

Բայց բոլորովին ուրիշ կեանք է Կովկասի էշերի այն ազգակիցների կեանքը, որոնք բախտի բերմամբ ընկել են Եւրոպայի հողի վրայ:

Ես չեմ խօսիլ մարդուած էշերի մասին, որոնք յայտնի են կրկէսներում իրանց խաղերով, և ոչ էլ այն ուշիմ կաթ բաժանող էշերի մասին, որ կարդացած կըլինիս «Աղբիւրում», այլ վեր կառնեմ Ֆրանսիայի գիւղացու բեռնակիր էշը, որ նոյն չորքոտանի երկայնականջ աբարածն է, ինչ որ մեզանում, միայն այն տարբերութիւնով, որ տէրը կովկասեցի չէ, այլ եւրոպացի:

Ես կըսկսեմ էլի իշուկից:

Իշուկին սիրում են ամենքը, նրան տեսնելուց թէ մարդ թէ կին, թէ գիւղացի թէ քաղաքացի, թէ հարուստ և թէ աղքատ փսպաքշում է. «ո՛հ ինչ ազնիւ է, ինչպէս խելօք է», ասում են փոքրիկները, շփում նրա թաւ ճակատը, ճպուռտ աչքերը, քիթուպռունգը. ով մի քաղցր բան ունի, իշուկին է համեցէք անում. նա էլ խունջիկ-մունջիկ մօտենում է ամենքին, առնում համեղ պարգևները, հոտոտում, լիզում նրանց ձեռք ու երեսն ու փռնգալով թռչկոտում է նրանց շուրջը:

Քանի մեծանում է իշուկը, տիրոջ խնամքը ևս շատանում է. նրան ամեն օր թիմարում է, տարին մի քանի անգամ լողացնում, մի շտ լաւ խոտ ու դարման, աղած գարի ուտացնում, անմաս չէ թողնում և քաղցր ճակնդեղից, կաղամբի ու խամբարի (եղիպտացորենի) տերևներից, ուտացնում է և տանը մնացած հացի աւելցուկը, այնպէս որ իշուկի աչքը միշտ կուշտ է մնում. նրա գոմը ևս կարգին է, տաք, մաքուր, յատակը խոզանով ճաճկած,

չուլ ու փալասը եղանակի համեմատ փոխվում է. մի խօսքով իշուկը դոհ է մնում իր վիճակից...

Գալիս է բեռ քաշելու ժամանակը, տէրը գիտէ որ նա դեռ թոյլ է, ոսկորները չեն ամրապնդուել, նրա ուժի համեմատ մի թեթև սայլակ է կոպում ետևից, մի փոքր բան դնում մէջը և ճանապարհ ընկնում ուղած տեղը. իշուկը թռչկոտում է, սայլակի չխչխկոցը նրան զուարճութիւն է պատճառում, տէրը դադանակի փոխանակ նրան գուրգուրում, աշխոյժ է տալիս ամեն քայլափոխում, ճանապարհին պատահած խոտից կտրում, բերանն է կոխում և նա տոփ-տոփ անելով միշտ սրանում է։

Հասնում է տուն իշուկը, նրան արձակում են սայլակից, իսկոյն շփում նրա աչքերը, ականջները, կերակուրը առատ թափում նրա առաջը, եթէ եղանակը ցուրտ է՝ լաւ ծածկում մէջքը, փորը, որ չմրսի, ժամանակին ջուրը տալիս. փոքրիկները մօտենում են նրան, դարձեալ սկսում է առաջուան փաղաքշանքը երկու կողմից։

Նա մեծ էշ է դառնում, ուժը կրկնապատկուել է. նրան լծում են աւելի մեծ սայլակում, այժմ աւելի մեծ բեռ է քաշում, բայց երբէք չես լսիլ նրա տնքոցը, տիրոջ ոպառնալի ձայնը. նա միշտ նոյն աշխոյժ էշն է ինչ որ առաջ, նրա մէջքը դեռ մտրակի հարուած չէ տեսել ու ծեծի վրայ դաղափար չունի։ Ծօտեցիր նրան ուր որ էլ լինի, ազատ թէ բեռան տակ, նա գլուխը կրծռի դէպի քեզ, կրհոտոտայ, ականջներն ու պոչը ուրախութիւնից կըշարժի ու կրփռնգայ։

Այսպիսի հարիւրաւոր էշեր ամեն օր կրպատահեն քեզ ճանապարհներում, շատ անգամ առանց տիրոջ ահագին սայլը քաշելիս, և կամ չորս հինգ կնիկ նստած, սանձը բերանում գլուղը գնալիս։

Ծերացաւ էշը, պատիւն էլ շատացաւ. նրա բեռը թեթևանում է, աշխատութիւնը քչանում. նա շատ ա-

զատ ժամեր ունի դաշտում արածելու, իր ցանկացած խոտը ուտելու, իր ուզած ջուրը խմելու, ոչ ոք նրան չէ արգելում, ոչ ոք նրան բէդամադ չէ անում. առաջուան պէս ամենքը սիրում են իրան, ինքն էլ նրանց է սիրում. սէրը՝ սիրոյ փոխարէն...

Սատկում է Եւրոպայի էշը ոչ թէ բեռան տակ, ոսկր ու կաշին մնացած, այլ Հանգստութեան մէջ, խոր ծերութեան հասած. նրա վրայ ցաւում է տէրը, մանրիկները արտասվում են սև էշի վրայ ու յարգանքով թաղում գիւղից ոչ հեռի մի փոսի մէջ։

Սահում են տարինները, փոքրիկ գիւղացին մեծանալով երբ անցնում է այնտեղից, յիշում է հօր սև էշը, նրա արած ծառայութիւնները, մի բոպէ կանգնում է տխրագէմ ու հառաչելով անցնում դէպ առաջ...

Ահա այսպէս են վարվում եւրոպացիք, որ յիմար անասուններն էլ խելօք են, իսկ մեզ մօտ մեր լաւերն էլ յիմարանում են, որովհետև մենք չդիտենք նրանց գրաւել, կրթել, խնամել։

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ։

ՕԴԸ ԵՒ ՆՐԱ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Նչպէս ձեզ արդէն յայտնի է՝ օդը ճնշում է դործում ամենայն կողմ և ճնշման մեծանալը կամ փոքրանալը հաղորդում է ամենայն կողմ։ Օդի այս յատկութիւնը մեզ կօդնէ լսմանալու թէ արդեօք օդը ունի ծանրութիւն թէ ոչ։ Եթէ օդը ունի ծանրութիւն, այդ ծանրութիւնը պէտք է ճնշումն դործէ վերևից դէպի ներքև, այնժամանակ այդ ճնշումն կըհաղորդուի ամենայն կողմ։ Իսկ եթէ օդը չունի ծանրութիւն, ուրեմն այդպիսի մի ճնշումն անհնարին է։

Հետևեալ մի քանի փորձերով ցոյց տանք, թէ արդեօք մեզ շրջապատող օդը ճնշո՞ւմ է թէ ոչ։

Փորձ 16. Լցրէք բոլորովին բաժակը ջրով. ծածկեցէք բաժակի բերանը թղթով և ձեռքով պահելով թուղթը, յանկարծ շրջեցէք բաժակը բերանի վրայ (նկ. 19)։ Այժմ հեռացնելով թղթից ձեռքը, դուք կընկատէք, որ ջուրը չի դուրս դալի բաժակից։ Իսկ դիտէք ինչո՞ւ։ — Օդը ունի՞ ծանրութիւն, այդ պատճառով ճնշումն է դործում բոլոր մարմինների վրայ ամենայն կողմից. նա ճնշում է նոյնպէս թուղթը ներքևից դէպի վերև և այդպէս չի թոյլ տալիս նրան վայր ընկնելու։


Նկար 19.

ֆաժակի մէջ եղած ջուրը նոյնպէս ճնշումն է դոր-ծում թղթի վրայ, բայց այս ճնշումն աւելի փոքր է քան թէ այն ճնշումն, որը ներգործում է օդը թղթի վրայ ներքևից վերև և հէնց այդ պատճառով թուղթը չի վայր ընկնում, ուրեմն և ջուրը չի կարողանում թափուել։ Եթէ օդը ծանրութիւն չունենար, այնժամանակ թղթի վրայ ներգործող ճնշումն չէր կարող գոյութիւն ունենալ և ջուրը դուրս կը թափուէր։ Ինչ ամանի հետ կամենաք փորձեցէք այդ փորձը. լինի դա շիշ կամ ամպարի ապակի,—դուք միևնոյնը կը նկատէք, ինչ որ նկատեցիք վերոյիշեալ փորձի ժամանակ։

16-որդ փորձում օդը ճնշումն էր գործում ջրի վրայ միմիայն ներքևից. իսկ վերևից և կողքերից օդը չէր կարող ճնշել, որովհետև բաժակը արդէն էր լինում։ Ուրեմն թղթի վրայ ճնշումն էր գործում միմիայն ջուրը և միևնոյն ժամանակ՝ օդի ճնշումն ներքևից դէպի վերև լինելով աւելի մեծ քան թէ ջրի ճնշումն վերևից՝ ջուրը չէր կարողանում թափուել։ Ապա ուրեմն՝ ջուրը կը թափուի եթէ նրա ճնշումն միւորևիցէ կերպով մեծացնենք։ Վերոյիշեալ փորձում ջրի քանակութիւնը քիչ էր։ Ի՞նչ կը պատահի արդեօք եթէ աւելի շատ ջուր վերցնենք։—Հեշտ է դուշակել, որ ջուրը ամանից կը թափուի, եթէ ջրի ծանրութիւնը օդի ճնշումից մեծ կը լինի։ Ես յիշատ, եթէ վերցնենք միւորևիցէ աման՝ 35 ոտնաչափ բարձրութիւնով, կամ թէ դրանից աւելի, ջուրը անշուշտ կը սկսի դուրս թափուել և այս երևոյթը՝ այսինքն ջրի դուրս թափուելը՝ կը շարունակուի մինչև որ մնացած ջրի ծանրութիւնը հաւասար լինի օդի ներգործող ճնշմանը (ներքևից)։ Յետոյ կը համոզուէք այս բանի մէջ, իսկ այժմ հետևեալ փորձով ցոյց տամ ձեզ, թէ ինչպէս ուրիշ կերպով մեծացնել թղթի վրայ վերևից ներգործող ճնշումն։

Փ ո ր ձ 17. Փակեցէք մատով ձագարի ծայրը և լցրէք

ջրով։ Այժմ ծածկեցէք թղթով և կրկնեցէք 16-որդ փորձը (նկար 20)։ Ջուրը, ինչպէս տեսնում էք, դուրս չի թափվում։—Ինչո՞ւ։—Իսկ ինչ կը պատահի, եթէ մատը հեռացնենք ձագարի ծայրից։—Ներքևից թղթի վրայ միմիայն օդը կը ճնշի, իսկ վերևից՝ այժմ բացի ջրից, կը ճնշի նոյնպէս և օդը։ Ուրեմն վերևից ճնշում են ջուրն ու օդը, իսկ ներքևից՝ միմիայն օդը։ վերևից ներգործող ճնշումն աւելի սաստիկ լինելով քան թէ ներքևի ճնշումն, թուղթը վայր կընկնի և ջուրը դուրս կը թափուի։ Միևնոյն փորձը կարող էք կրկնել վերցնելով յատակ չունեցող շիշ կամ լամպարի ապակի։

Նկար 20.

Հետևեալ հասարակ փորձով նոյնպէս կարելի է հաստատել օդի ծանրութիւնը։

Փ ո ր ձ 18. Ձարժեցէք առաջ օդահանի խթոցը մինչև ծայրը և այս վերջինը ամուր կապեցէք փամփուշտով։ Այժմ յետ շարժելով խթոցը (նկ. 21), դուք կընկատէք որ

Նկար 21.

փամփուշտը հետզհետէ նստում է։ Ինչպէս բացատրել այս երևոյթը։—Ահա ինչպէս։—Առաջ մինչդեռ խթոցը յետ չէր քաշուած, օդահանի մէջ կար օդ, որի ճնշումն հաւասար էր շրջապատող օդի ճնշմանը, այս պատճառով և փամփուշտը մնում էր ձգուած։

Այժմ երբ դուք յետ քաշեցիք խթոցը, օդահանի մէջ եղած օդը բռնեց աւելի մեծ ծաւալ, ուրեմն և նրա ճնշումն փոքրացաւ. այսպէս՝ արտաքին օդի ճնշումն աւելի մեծ լինելով քան թէ օդահանի մէջ եղած օդի ճնշումն, փամփուշտը նստում էր խթոցի մէջ։

Կրկնեցէք այդ վոլտը, ամուր կապելով ձագարը փամփուշտով, ձագարի խողովակը դրէք բերանի մէջ և դուրս ծծեցէք նրա միջից օդը: Այնժամանակ ձագարի մէջ եղած օդի ճնշումն շրջապատող օդի ճնշումից աւելի վոլտը կըլինի, և այդ պատճառով փամփուշտը դէպի ներս կըքաշի:

Խնդրեմ ասէք, շրջապատող օդը ինչո՞ւ է ճնշումն գործում:

Վերցրէք մի որևիցէ վոլտիկ շիշ և դնելով բերանի մէջ դուրս հանեցէք նրա մէջի օդը և առանց բերնից հանելու փակեցէք շիշի ծայրը լեզուով. դուք կըհամոզուէք, որ շիշը այնպէս ամուր է կպչում լեզուին, որ դժուարութիւնով է նրանից հեռանում: Ինչո՞ւ: Որովհետև շիշի մէջից այնտեղ եղած օդի մի մասն և մնացած օդի ճնշումն այնքան նուազեց՝ համեմատելով արտաքին օդի ճնշման հետ, որ արտաքին օդը ճնշելով շիշը լեզուին՝ չի թոյլ տալի սրան դալու:

Վերոյիշեալ վոլտերից կարելի է եզրակացնել, որ օդը ունի ծանրութիւն, և այդ պատճառով նա ճնշումն է գործում բոլոր մարմինների վրայ. այդ ճնշումն աննկատելի է, որովհետև օդը շրջապատելով ամենայն կողմից մի մարմին, ամենայն կողմից էլ նրա վրայ ճնշում է գործում:

Փորձ 19. Լցրէք մի որևիցէ շիշ կամ բաժակ ջրով և բերանը ծածկեցէք թերթով: Ձեռքով բռնեցէք թերթը և այնպէս շրջելով շիշը դրէք ջրով լի ամանի մէջ (նկ. 22): Հանելով ջրի տակից թուղթը, կըտեսնէք որ ջուրը շիշից չէ դուրս թափվում: — Ինչո՞ւ:—Եթէ ջուրը շիշից դուրս թափուի, ամանի մէջ եղած ջուրը պէտք է բարձրանայ, միևնոյն ժամանակ պէտք է բարձրացնի և այն օդը, որը գտնվում է ամանի մէջ ջրի մակերևոյթի վրայ: Որևէ ամանի մէջ եղած ջուրը նեղթարկվում է երկու ճնշման. արտաքուստ նրան ճնշում է շրջապատող

Նկար 22

օդը և բացի դրանից շիշի մէջ եղած ջուրը նոյնպէս ճնշումն է գործում նրա վրայ: Ընդհատող օդի ճնշումն շիշի մէջ եղած ջրի ճնշումից մեծ լինելով ջուրը շիշից չի դուրս թափվում: Խոկ ինչպէ՞ս դուրս հանել շիշի մէջ եղած ջուրը: Պէտք է մխրճելով կլորով մեծացնել ջրի ճնշումն շիշի մէջ: Սրա համար կարելի է կամ վերցնել շատ երկար շիշ 27 ոտնաչափ երկայնութիւնով, որպէսզի ջրի ճնշումն այդ շիշի մէջ լինի աւելի մեծ օդի ճնշումից, այնժամանակ ջրի մի մասը շիշից կը թափուի ամանի մէջ, կամ մեծացնել ջրի ճնշումն՝ մղելով ներսեն օդ, այնժամանակ ջուրը դարձեալ պէտք է դուրս թափուի շիշից:

Այս բանը հետևեալ անգամ փորձով կը հաստատեմ:

Ց. ՁՈՀՐԱԲԵԱՆՑ:

ԱՅՍ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՐՈՂԻ ԱՂՋԱՆՈՒՆՆ Է: ԽՄԱՑԷՔ ՈՎ Է:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ ա ր դ ու գ լ ե ղ մ ա ղ ե ր ի Թ ի ւ ը։ Անգլիացի բժիշկ Վ. Լիլսոնը հաշուել է որ մարդու գլխի մէկ քառակուսի դիւիմ հասարակ մազ կայ։ Այժմ եթէ ընդունենք, որ գլխի ամբողջ վերին մասի կաշին բռնում է մօտաւորապէս 120 քառակուսի դիւիմ, ասել է այդպիսի մի գլխի վրայ կըտեղաւորուի 127,920 մազ կամ, մինչեւ Թուով, կարելի է ընդունել 130,000 հատ։ Թէ կան շատ մարդիկ, որոնք հաւասար Թուով մազեր ունին երանց գլխի վրայ, շատ հեշտ է ապացուցանել հետեւեալ հասարակ դատողութիւնով.

Գլխի վրայի մազերի Թիւը կարող է 1-ից մինչեւ 150,000 հատ լինել, իսկ բոլոր մարդերի Թիւը աւելի քան մի-քանի հարիւր միլիոն է։ Գլխի վրայ զանազան քանակութիւնով մազեր ունեցող մարդերի Թիւը 150,000-ից աւելի չէ, հետեւապէս մնացած միլիոնները պէտք է 1-150,000 Թուից մինի ու մինը ունենան։

Փ ո ր ձ ե ր մ ի չ ա տ ե ր ի կ ե ն ս ա կ ա ն ո ւ Թ ե ա ն վ ր ա յ։ Առանց օդի բայց գազով՝ այսինքն Թթուածնով, ջրածնով, ածխածնով և խլորով լի անօթների մէջ դրած մկնատների վրայ փորձեր անելով՝ եղեւ որ ձանձը 29 ժամ է ապրում Թթուածնի մէջ, ցեղեկուայ Թեթեւը՝ 12 ժամ, գիշերուայ Թեթեւը՝ 36 ժամ։

Ձանձը 20 րոպէ է ապրում ջրածնի մէջ, գիշերուայ Թեթեւը՝ 20 րոպէ, ալիճակը (ձիու ճանճը)՝ 10 րոպէ։ Ածխածնի մէջ ճանճը ապրում է 15 րոպէից ոչ աւելի։ Իսկ խլորի մէջ սատկում են բոլոր մկնատեսակները։

Ա յ ր ո ւ ո ղ ջ ա խ ե ն։ Շատ հեշտ է այնպէս անել, որ մեզ եղեւայ Թէ ձնագունդը այրուում է։ Դրա համար հարկաւոր է ձնագունդի վրայ դնել մի կտոր քաւիւր և վառել։ Այնպէս որ քաւիւրի այրուելու ժամանակ ձիւնը սկսում է հալուել և այնպէս պարզ է լուսաւորուում, որ կարծես Թէ այրուելիս լինի։ Այս աչքախաբութիւնը աւելի կըյաջողուի, եթէ քաւիւրի կտորտանքը սիրուած լինի ձիւնով ծածկուած գետնի վրայ։

Զ ո ւ ռ ն Թ ա ր մ պ ա հ ե լ ո ւ մ ի ջ ո ց։ Ամերիկայում գտել են որ եթէ ձուի սպիտակուցը բաժանուի դեղնուցից և առանձին անօթներում չորացնուի, այդ կերպ ձուաները կարելի է պահպանել, առանց վնասելու, մօտ 3 տարի, մինչդեռ յայտնի է որ Թարմ ձու պահելը շատ դժուար է, ուր մնաց Թէ՝ այդպէս երկար ժամանակ։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ըստ Ս. Գոռոնեանց.

20) *Մի անուն պակը յոյսին դրուածքի.*
Որ երկու վանկից բաղկացած լինի.
Ամբողջ բառն՝ առանց երեք տառի,
Յոյժ տայ խառակիչ մի չարքատանի.
Իսկ վերջին վանկն առանձին վերցրած՝
Յիշեցնէ մեզ մարդ տարիքն անցած,
Եւ եթէ ամբողջ մենք բառը վերցնենք
Ու դրա մասին զարքնին հարցնենք,
Նա մեզ ժպտալով կրտայ պատասխան.
«Ինձ մօտ կանզնողը կրտեսնի նորան»:

21) Երկար շմայ առանց շատ:

22) Տանը հարամ, հանդին հալալ:

23) Ալ չաթու, չալ չաթու,
Ոսկից կուգամ.
— Փայից կուգամ:
Ինչու ես ցամաք.
— Ալիքից կուգամ:

23) *Կարեցէք հասա լիլիից քասն հատ բալորովին իրար հաւասար ուղիղ-անկիւն եռանկիւնիներ, դիցուք այս չափով*



և այնպէս դասաւորեցէք, որ դրանցից կազմէք քառանկիւնի:

24) Հաւաքեցէ՛ք Հայկական այն բոլոր առածներն ու հանելուկները, որոնց մէջ հանդիպում են հեռաւեալ անուննները, պահպանելով տեղական բարբառը։

Մեր ընթերցողներից ով որ՝ ոչ պակաս քան տասն հատ առած կամ հանելուկ կառաջարկէ խմբագրութեանս, նա կըստանայ «Աղբիւրի» հրատարակած գրքերից մինը՝ իրա ընտրութիւնով։ Միայն թէ՝ առաջարկածները տպուած չլինին ինչ-որ Հայկականում, Տ. Նաւասարդեանի հաւաքածուի մէջ և կամ դասագրքերում և այլն։

ՉՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Մի տաշտ հով ճաթի,
Մի տաշտ տաք ճաթի.
Ջան հով ճաթի, ջան,
Ջան տաք ճաթի, ջան։

Նախընթաց № 3-ի մէջ եղած՝ Արևագոգաման, նկարն, հանելուկների և բերուսի բացատրութիւնը.

15) ԱՆԱՀԻՏ

16)



17) *մեռել.* 18) *լոգ, կով և հաւ.* 19) *դուռն. բերուս՝ մարդ կայ՝ հագած սրժէ, մարդ էլ կայ մէկ հատ չարժէ.*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆՑ.

Дозволено цензурою. Тифлисъ, 23 марта 1885 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Աւելորդ չենք համարում յայտնել մեր ընթերցողներին, որ այս տարուայ սկզբից «Աղբիւրի» յօդուածների ճակատին դրած օրնամենտները վերցրած են Աննի աւերակների զարդերից (յայտնի Գրիմմի աշխատութիւնից) և յատկապէս «Աղբիւրի» համար են պատրաստուած «Աղբիւրի» վորագրիչ Տատիշվիլիի աշխատութիւնով։

Ինչպէս յայտարարած էինք «Աղբիւրի» № 5-ը լոյս կըտեսնի № 6-ի հետ մի տասին Յունիսի մէկին։

Խնդրում ենք մեր այն բաժանորդներին՝ որոնք դեռ չեն վճարել իրանց բաժանորդագինը, բարեհաճեն փութով հասցնել։

Անցեալ № 3-ում գետեղած հանելուկը առաջինը գտաւ տասը տարեկան Վահագն Վարդանեանը Թիֆլիզում, որին և հրաւիրում ենք մտնել խմբագրատուն և ստանալ իր նուէրը՝ Անահիտ գրքոյկը շքեղ կազմով։

«ԱՂԲԻՒՐԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ ՅԱՅՏՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

«ԱՂԲԻՒՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Փայտաշէն Խրճիթից—Սպիտակ տունը (Ջէյմս Գարֆիլդի կենսագրութիւնը. պատկերազարդ)։ Փոխադր. Ն. Տէր-Աւետիքեան և Լ. Մելիք—Ադամեան։ . . . . . Գինը 60 կ.
Նոյնը գեղեցիկ կազմով . . . . . » 1 ռ.
2) Աւետարանչուս, Հսկայ—Մրջիւն (Պատկերազարդ) Թարգմ. Տ. Գիւզալեանց։ . . . . . » 40 »
Նոյնը վառակազմ . . . . . » 1 ռ.
3) Ժան Բատիստ Լիւլլիի մանկութիւնը։ Փոխադր. Տ. Ծովհաննիսեան. . . . . » 10 »
Նոյնը վառակազմ . . . . . » 50 »
4) Պուշկին, Ոսկի Ձկնիկ. Թարգմ. Ղ. Աղայեանց։ (I Սերիա, ընտիր Թղթի վրայ) . . . . . » 30 »
Նոյնը (II Սերիա) . . . . . » 5 «

ՀԱՐԱՒՆԱԿՎՈՒՄ Է 1885 ԹՈՒԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱԳԲՈՒՐ“

ՄԱՍՆԱՒՈՐ ԳԱՍՏԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ
(ԵՐԻՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

(ՏԱՐԷՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ 12 ՀԱՄԱՐ 2—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Ամառուայ սկզբի և վերջի ամիսների համարները յոյս կը տեսնեն միասին։ Կը հրատարակուի մի՛միայն գլխովի, մի՛միայն ուղղութիւնով և նոյն աշխատակիցների մասնակցութիւնով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։
II) Բանաստեղծութիւններ։
III) Գիտութիւն և արուեստ։
IV) Հետաքրքիր տեղեկութիւններ։
V) Այլ և այլք։

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, ֆրեբելեան, շաբաթուան և այլ խաղեր, ընթերցանքներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։
VII) Երգեր ձայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, և տեղեկութիւններ։
IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։
X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։
XI) Խառն լուրեր։
XII) Պատասխաններ։ Յայտարարութիւններ։

Երկրորդ բաժինը կը հրատարակուի առանձին թերթով տարին երեք անգամ։ Տարեկան բաժանորդները կը սահման երեք պըէհա՝ յունուարին, յունիսին և դեկտեմբերին։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը **3** ռուբլի է, կէս տարուանը՝ **2** րուբլի, առանձին համարները **50** կոպէկ։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Агбюръ“։ իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիրը—Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ։